

ՀԱՅ
ԲԶԱԿ
ՊՈԵՄԵՐ
ԳԵՏԵՐԱՅ

891.99
Վ-82



0219.








9758001
38239



831.99
Ա-82



ՀԱՅ ՊՈԵՄՆԵՐ

ՀԱՅ

01 JAN 2009

19 NOV 2010



ՀԱՅ ԱԿԱՆ
ԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՌԵՎԱՆ • 1935

21 FEB 2013
RUS MAL 10

27272

891.99

Կազմը, հեղինակի պորտրեն, ան-
վանաբերը, ժույց-սխույնները լեզ-
վաբանական խմբագրությունը
նկարիչ Տ. Խաչվանյանի:
Մրցադրիչ՝ Հ. Գոլու-
խանյան:

•••

Գլավկոս 265, պատկեր 64,
սիրտ 4000: Պետհրատի
սպարան, Յերեվան,
II Գնունի 4.



ԱՐՅՈՒՆՈՑ ԾԱՌԿՆԵՐ





Ա Ր Ե Վ Ը

Լսում եք... սպասեք մի փոքր, յիս ձեզ կպատմեմ բոլորը
սկզբից...

Գնում եք... լսի՛, յիս կպատմեմ ծաղիկներին ու խոտերին...

Սիրուն կակաչներ, լսի՛ լսեցեք արեւի պատմութիւնը...

Աղջիկս հիվանդ եր...

Դիտեք, նա ել ձեզ նման մի ծաղիկ եր, նախուշունիկ դեմքով,
վսակեղանգուր մազերով:

Աղջիկս հիվանդ եր...

Բժիշկը յեկա՛վ, իջա՛վ մեր բնակարանը: Նա տխուր եր: Խնչում...

Հա, հիշում եմ, նա չէր սիրում ներքեւի հարկերը...

Նա իջավ ներքե, նայեց իմ աղջկան, նայեց սենյակի պատերին.

— Թո՛ղնա՛վ ե—ասաց, պիտի փոխեք բնակարանը, պիտի արե—վակոդ սենյակ ճաքեր...

— Քանի՞ յերեխա ունեք,—հարցրեց:

— Յերեք եյին. յերկուսը մեռան, մնաց այս մեկը... Ազա—տեք իմ աղջկան. նա մեր տան հողին է...

Նա ինչ—վոր դեղ դրեց ու տխուր դեմքով դուրս գնաց:

— Հայրիկ, ինչ դրեց բժիշկը,—հարցրեց աղջիկս:

— Արե դրեց սիրելիս, արե դրեց, վոր փայլի քեզ վրա ու ազատի ցավից...

Ու այն որը գնացի արե փնտռելու. գնացի չափ հեռու՝ քա—ղաքի ծայրը ու դատ արեկոդ մի բնակարան:

— Սիրճճն կակահնեը, արեի դավախներ, ավելի լավ չե՞ր, ձեզ մոտ բերեյի իմ վոսկեծամիկ աղջկան:

Դուք նրան կողոզեյիք կարմիր ու կանաչ...

Բայց, հա՛, դիտեմ, դուք նրան հաց չեյիք տալ... Դուք մնովում եք վաղորդյան ցողով...

Լսե՛ր, յես դեռ չեմ վերջացրել...

... Մյուս առափոտ պիտի տանելի աղջկանս արեի տուն, բայց յերբ լուսացավ, նա ինձ կանչեց, ձեռքս բռնեց ու փակեց աչքերը...

Հետո յեկան մարդիկ ու տարան նրան...

Ու յերբ վոսկեծամիկ աղջիկս հեռացավ մեղանից, մենք բո—լորս այրվեցինք լալուց, իսկ յես դարձա արեի հիվանդ:

Յես գնում եյի, նստում փոքրիկ գերեզմանի մոտ և սպասում արեածաղին:

Ու միշտ տեսում եյի աղջկանս՝ արեը դրկած և իր մազերը նրա վրա փռած...

Բայց յերբ պատմում եյի արեի մասին, կինս ու մայրս չեյին հավաստում. նրանք կարծում եյին, թե յես խելագար եմ, և վորքում եյին այրված, ցամաքած աչքերով:

Ու մի որ ել յես դիմեցի արեին.

— Հզոր արե, —ասի—մի մեծ դանդաղ ունեմ քեզանից. ինչո՞ւ դու մի շողք խնայեցիր իմ աղջկան, ինչո՞ւ սպանեցիր ու տարար նրան:

Նա տխրեց ու մթնեց:

— Դնա՛, ասաց, գնա՛ հայտնիր աշխարհին, ասա—վերելի հար—կը արեի շողքերը խլեց, սովեր ձգեց ներքեի հարկին ու սպանեց ես վոսկեհեղ աղջկան...

1913





Վ Ի Ր Ա Վ Ո Ր Թ Ռ Զ Ո Ւ Ն Ը

Անցնում եմ սալահատակ մայթերով, քայլում եմ՝ հալածված են շքեղ լույսերից, քարերի տապից, խեղդող փոշուց...

Կուրծքս հիվանդ ե, աչքերս մթնում են, ծնկներս ծալվում, իսկ դու, սևերես, կրկնում ես անվերջ.

— Գնա, գնա...

Յես քեզ վաղուց եմ ճանաչում, ով սևերես կարիք, դու գիշեր ցերեկ հետևում ես ինձ, հալածում...

— Հիշում ես... դու տարար ինձ այն մեծ խանութք, ուր ամեն ինչ կար ուտելու համար, բայց այդ ծով-ուտեղեղենի մեջ յես քաղցած եյի ու ծանտալի նման չեյի կարող ձեռք տալ և փոշ մի

բանի: Յես—մի դալուկ որիորդ, նստած այնտեղ, միայն դանձում եյի արևոջս փողերը...

Հիշում էս, յերբ առաջին անգամ փոս դրի այնտեղ, յերբ խանութի տերը զիջեց մորս աղաչանքին ու ինձ ընդունեց... նա ինձ հավանեց ու գաղտնի հրճվանքով ասաց իր մտքում.

— Կգա ժամը և դառը կլինի փողջակեղ...

Յես ընդունակեցի և առժամանակ հանգիստ առա... Կարճատեղ հանգիստ...

Նա միշտ նայում եր ինձ իշխողի ժպտով, նա ցանկանում եր ինձ, իսկ դու, սևերես կարիք, զննում եյիր դռան արանքից.

— Զոհվիր, դառնուկս... յեթե չհպատակվես, ցուրտ ձմռանը կմնաս մայթերի վրա...

... Յեզ ահա մի որ տերս հայտնեց իր կամքը. դադանի ծով-տով մեկնեց ձեռքերը դեպի ինձ, ուղեց ճաշակել իր ստրկունքն, բայց համբույրի տեղ մի ապտակ իջավ եր մսեղ դեմքին:

Նա ապրեց, կատաղեց, ուղեց հարձակվել նորից, բայց յես արդեն դուրսն եյի...

Ու այն որից յես յեկա ձեզ մոտ, ով անհյուրընկալ մայթեր, յես ընկերացա քեզ ով սևադեղատ կարիք...

... Անցնում եմ սալահատակ մայթերով, քայլում եմ՝ հալածված են շքեղ լույսերից, քարերի տապից, խեղդող փոշուց...

Կուրծքս հիվանդ ե, աչքերս մթնում են, ծնկներս ծալվում, իսկ դու, սևերես կարիք, կրկնում ես անվերջ.

— Գնա, գնա...

1913



ԿՐՍՍՏ ՏՈՒՆԸ

Այդ այն որերին եր, յերբ ամեն ինչ չարժեք
Յերբ մութ խորշերից ձայնեց դարավոր սողոթը, յերբ բացվե-
ցին փակ բերանները...

Այն ժամանակ Սարգիսը վերագարձավ քաղաքից ու հայտա-
բարեց գյուղի հրապարակում.

— Եւ հարուստ-աղքատ չկա. սրանից դենը բոլորս մին ենք...
Շուտով յեկան նրա յետեից և ուրիշները՝ նոյն հովերով, ու
ամբողջ գյուղը գլորդաց նոր խոսքերի տաքափից:

Պատմում էին քաղաքի անցքերից, չմեղմում գյուղացիներին
նոր բերած մտքերով:

Այդ որերին եր անա, յերբ Սարգիսը ուրախ սրտով սկսեց իր
նոր տան շինքը. նա բարձրացրեց պատերը, բայց չկարողացավ
ծածկել ու սարքել իր տունը...

Ու անցան տարիներ, անցավ այն ժամանակը...

Սարգիսը մնացել եր գյուղում, քաղաքում եւ գործ չկար...

Նա ման եր գալիս լուռ, ինքն իր մեջ խորասուզված, աշխա-
տելով աննկատելի դարձնել իրեն: Խոնարհեցել եր նրա չուխան
վորի վրա յերևում էին յերկու մեծ կարկատաններ, դժգունել եր
նրա դեմքը, իսկ նրա տունը դարձյալ կիսատ եր...

Անցել եր այն ժամանակը, կյանքը նորից իր նախկին հունի
մեջ եր ընկել: Գյուղի հրապարակում դարձյալ իրենց առաջվա
դիրքերն էին գրավել յերկու վաղխառունները՝ հաստափոր Սանդ-
րոն և Նիհար, չոր Մարտիրոսը:

Ու ամեն անգամ, յերբ Սարգիսը լուռ անցնում եր գյուղի
չուկայով, Մարտիրոսը տերողորմյան ձգելով, սպասում եր վոր
նա մոտենա ու կամացուկ ասում.

— Սարգիս, կարելի ա փող ա հարկավոր, արի տամ, տունդ
վերջացրու...

Ու նրա վոսկրոտ դեմքի վրա խաղում եր խորամանկ ժպիտը,
և մանր աչքերը խայթում էին հեղնոդ փայլով:

Սարգիսն անցնում եր լուռ, արհամարհանքով, բայց անա նրա
առաջ եր գալիս հաստափոր Սանդրոն՝ ջրջադատված իր համա-
խոհներով: Դեռ հեռվից նա բղավում եր իր հրճվալից, խրխնջող
ձայնով.

— Սարգիս, բա ասում եիր եւ հարուստ-աղքատ չկա. բա
ինչի՞ չկա տունդ շինում, արբը կիսատ ա մնացել...

Սարգիսն այրվում եր այդ խոսքերից, նրանք հիշեցնում էին
անցած որերը, յերբ նա ինքն եր հարձակվում այդ յերկու վաղխա-
ռունների վրա,— ու եւ չէր համբերում.

— Շատ մի յեղակալիլ,— ասում եր նա.— մի առվով վոր ջուր
ա գնացել՝ մին եւ կգնա... սաղ աշխարհի տունն ա կիսատ մնա-
ցել, մնաակ իմը հո չի՞ն լավ իմանա՞նք են որերն ելի կլան, տունս
կշինեմ քու աչքն եւ կհանեմ...

— Հո հո հո... մին եւ կըդա... հոհում եր Սանդրոն, ու
ծիծաղից փրկելով՝ ավելի յեր լայնացնում իր տեղը:

Յեւ նրա հետ ներդաշնակ հոհում էին իր շուրջը պատած
համախոհները.

— Ծրձանդեր, ծրձանդեր. տեղդ լինացել ա, ամա լավ միտդ պահիր. քանի ես խալիսի ցավը կա, են որերն ուղտին ման կլի կըչոքեն դռանդ առաջ.—

Ասում եր Սարգիսը, կծու հեղնանքով շափում վոտից դուռի Սանդրոյին ու հեռանում դանդաղ քայլերով:

Գնում եր ու իր այլովոյ աչքերով յեւթ վնասում այն նեղ փողոցներում...

Ու վորպես մի արձան են անցած որերի, խորհրդավոր լռութիւն մը հանդիպում եր նրան իր կիտառ տունը...

1912



ԱՐՅՈՒՆՈՏ ԾԱՂԻԿՆԵՐ

Ամեն առավոտ, արհեստանոց գնալիս՝ յես մի քանի ըոպեյով կանգ եյի առնում մի չքեղ տան պարտեղի առաջ ու հրճմանքով նայում դարմանալի դուշնդդույն ծաղիկներին:

Բայց ամեն անգամ հեռանում եյի դառը մտածմունքներով:

— Յերանի ձեզ, ծաղիկներ,—ասում եյի — ձեզ այդպես քնքույշ պահում, դուրգուրում են, ձեզ նույնիսկ աշնան ցուրտ գիշերները խորներով ծածկում են, վոր չմբսեք, իսկ ինձ, որ չի անցնում, վոր չծեծեն...

Յես իմ փոքրիկ տեղովս այնպես եյի մտածում, վոր մարդս մի ծաղիկ եւ չարմի:

Բայց մի աշնան առավոտ լես ատեցի այդ ծաղիկները...

Այդ որը մի դժբախտ որ եր ինձ համար:
Վարպետը հանձնել եր ինձ նորոգելու մի գույգ կողիներ,
իսկ ինքը գնացել իր գործերով:

Մեն ել ուշքս ավել ելի փողոցում խաղաղոց աշակերտներին
ու շարունակ նրանց կողմն ելի նայում: Մեկ ել տեսնեմ մեկը
ծուռ խփվեց ու ճկղքեց կողիկի կաղապարը:

Հենց այն գլխից ատում ելի այդ կաղապարները,—նրանք հի-
շեցնում ելին ինձ մեռելի վտարերը: շատ անգամ այդպես ել
տեսնում ելի նրանց յերազուստ:

Վարպետը վերադարձավ յերեկոյան դադարած, յերեկում եր
գործը, ավելի շուտ բեֆը՝ չեւ հաջողվել, որն ել կորել եր:

Նա իսկույն իմացավ իմ դժբախտութեան մասին և կատաղած
սկսեց ինձ ծեծել:

Մինչև այժմ ել սարսուռ և անցնում մարմնովս, յերբ հիշում
եմ այդ ծեծը, կարծես նա վճռել եր միանգամից վերջ տալ իմ գո-
յութեանը: Նա յերկար կծեծեր ինձ, յիթե պոտահամար ներս
չմտներ իր ծանոթ կողակալը: Նրանից քաշվելով՝ վարպետը բա-
վականայալ միայն ինձ փողոց դուրս ձգելով:

Աղի-աղի լաց լինելով, քայլերս ուղղեցի դեպի վարպետ:
տունը: Մտածում ելի, թե ինչպես միջոց,—այս անգամ ել նա
կհանդուստանա ու կմոռանա, բայց սխալվում ելի:

Տուն վերադառնալուն պես նա նորից հարձակվեց և մի քանի
հարված տալով, վռնեց ինձ փողոց, դուռով:

— Գնա, կորիք, ել չերեստ, թե չե կսպանեմ...

Կանչել ելի փողոցում մոլորված, սերտ լքվելով ու ցածր
ձայնով հեկեկում ելի:

Իսկ ահա նա քամին վղղում եր, փշաքաղում մարմինս, ասես
մտրակում եր, քշում ինձ, վոչ մի տեղ դադար չտալով:

Անցնում ելի դեռ ու դեռ ու մտածում՝ ուր գնամ, ինչպես
անցկացնեմ այդ յերկար դաժան գիշերը:

Նայում ելի դիմացի լուսավոր պատահաններին ու յերանի
տալիս այն տղաներին, վորոնք մայրական փափայանքով պա-
րուրված՝ տաք անկողիններում անուշ-անուշ քնած ելին:

Իսկ իմ մայրը... Նա շատ հեռու յեր, դուրսումը, և իսկի չեւ
կասկածում, թե ինչ որն և ընկել իր վորդին...

Այս դրութեան մեջ յես մոտեցա այն չքեղ մեծ տանը: Նայեցի
պարտեզի կողմը և իսկույն մի միտք անցավ գլխովս:

Յես հիշեցի, վոր աշնան ցուրտ գիշերները այդ պարտեզի
ծաղիկները վրա խաբրներ ելին ծածկում, վոր չմտնե:

Հենց այդ առավոտ յես տեսել ելի խաբրները:

«Ի՞նչ կլինի, — մտածում ելի, — յիթե անցնեմ պարտեզը,
մտնեմ այն խաբրների տակ և պոտապոտվեմ ցրտից: Առավոտը շատ
վաղ կհեռանամ, չեն նկատիլ ինձ, իսկ յիթե նկատեն ել, միթե
չեն ներել, յիթե իմանան իմ դրութեանը...»

Նավ նայեցի չորս կողմը, եստ մարդ չկա, բարձրացա ցան-
կապատի վրայով և իջա պարտեզ:

Մտա խաբրների տակ ու մի կերպ վտանքս կծկելով՝ պատը-
պարվեցի: Գետնը խոնավ եր, ծաղիկները հոտը չգնացնում եր,
որվա ցնցումները դեռ տանջում ելին ինձ: Յերկար ժամանակ
քուսն չեւ տանում, բայց վերջապես յես քնեցի և շատ խորը:

Սակայն իմ դարձները շատ դառն եր:

Յերաղի պես զգացի, կարծես ինչ-վոր ծանր բան վրաս ըն-
կավ:

Սուր, ասեղի նման ծակծկող ցավը կրկնվեց, ու յես վեր
թռա...

Հիշում եմ՝ պայծառ որ եր, արեն ընկել եր վրաս ու տաք-
ցրել: Բայց մի ակնթարթում ամեն ինչ աչքիցս ծածկեց մի հրեշա-
վոր դեմք, մեծ մորթի փափախով, վորն արջի նման կատաղած՝
հարվածում եր ինձ:

— Ծոհ, ավաղակ,—գոռում եր նա,—ինչ կասի իմ տերը: Լավ
և քո գլուխը մեռնի, քան թե ես ծաղիկները փչանան...

Ասում եր ու կոպիտ հարվածներ տալիս՝ նախ փայտով, ապա
ձեռներով:

Վեր կացա տեղիցս բայց նա նորից հարվածելով վայր գցեց:
Բթիցս արյուն եր կաթկաթում, կիսաթոն դրութեան մեջ շքմել
ելի, չիմանալով թե ինչ և կատարվում:

Նորից ձեգ արել, վեր կացա և որորվելով դուրս փախա պար-
տեզի բաց դռնով, յետեկցա թողնելով արյան կաթիլները հետքերը:

... Ահա այդ որվանից յես ատեցի այն չքեղ տան ծաղիկները,
ու ամեն տեսնելիս թվում և ինձ, թե նրանք այրունով են ջրվում.
Թվում և, թե են կարմիր ծաղիկները իմ արյան կաթիլներն են...

1008 976
38232



ԿԱՐՄԻՐ ՀԱՄԲՈՒՅՐԸ

Պատերազմի դաշտը այն դաշտն է, ուր ծաղիկները լալիս են, նուշնայես վերափոք ու հաղմանդամ...

Մի հատիկ ծաղիկ է շոյում դեմքս, յերբ մտնեցնում եմ դեռնին, այն ել աշնան դեպին ծաղիկ է,—մահվան ծաղիկը...

—Մենավոր ծաղիկ, թող ըմպեմ քո ցողը, ծաբափս հաղեցնեմ, թեկուզ մահվան թույն լինի այդ:

Բայց դու արյունոտ ես, վերափոք ինձ նման...

... Դիակներ... անդերձ դիակներ...

Նրանք ընկած են խառնիխուռն, թշնամին ու բարեկամը միասին:

Յեվ բոլորի դեմքին դրոշմած է մի լարված անշարժություն, ասես ամեն մեկը մեխել է հիշողություն մեջ իր տեսածը և սպասում է, վոր անեղ ձայնով պատմի աշխարհին:

Անգղիները պատվում են վերետու...

Նրանք իջնում են, մոտենում դուռնություն, ապա զգալով մեռելություն, համարձակ հոշոտում են մարմինները:

Ահա նրանցից մեկը կտցահարում է թափված ուղեղը:

— Հարգանք, ով անգղ, դեպի մարկդային ուղեղը... Նա արժանի չէր ուրիշ վեճակի,—շանթահար ուղեղը... բայց այժմ դարձել է անգղիների կերակուր...

* *

... Ձուր, մի կաթիլ ջուր...

Շարժվում եմ առաջ որհասական ճիզով:

Ինչ էլ լինի, պիտի փնտռեմ՝ պիտի գտնեմ ջուրը...

Հազիվ յերկու քայլի հասի փոքրոցում եմ ու ընկնում թուացած:

Դիակները պատել են չուրջս ու չեն թողնում հեռանալ: Նրանք կանչում են չորս կողմից, հրավիրում մասնակցելու լրենց լուռ խոհերին...

Տաժանելի ուղեղ, դու կպայթես այս լուռ խոսակցությունից...

Այս լուռությունը մի հզոր աղմուկ է, վորից փրկություն չկա...

* *

Առջևս ընկած է արյունոտ մի դեմք, հոյակապ մի մարմին ընկած է անշարժ:

Պատաստած վերաբերուի տակից յերևում է ժամացույցի յերկաթի շղթան, կախված փոքրիկ պատկերով:

Մոտենում եմ մի փոքր, նայում պատկերին ու սիրտս սկսում է բաբախել ուժգին:

Յերկրի վրա պատկեր է,—յերկու իմաստասերների խոհուն ճակատներով:

Յեվ հիշողությունս աչքովս է,—փնտռելով այն մարդուն վորի ձեռքին տեսել եմ այդ պատկերը:

— Յես քեզ ճանաչում եմ, ընկեր:

Ո՛ր, լավ կլինե՞ր՝ չճանաչե՞յի, չգատե՞յի քեզ այս անթիվ դե-
ակներեց...

Պատմիր, այդ իշպես յեղավ, վոր մենք թշնամի յենք իբար,
վոր իմ վողջույնի տեղ դուցե քեզ հանդիպեց իմ դաժան գնդակը .

Պատմիր...

Բայց դու չես կարող խոսել.—բերանդ լիքն է արյունով և
մահվան խավաբն իջել և աչքերիդ...

Հիշում ես այն յերեկոն, յերբ դուքսը բուք ու ձյուն եր, խոկ
այն անշուք տանը կրակը վառվում եր ոջաղում դուրեկան ճարճա-
այունով։ Ու մենք,—ոտարադղի ընկերներս, ի մի հավաքված,—
խոսում եյինք դալիք որբերեց... Յեւ դու, հիշում ես, ժպտալ դեմ-
քիդ շփում եյիր մատներով այս փոքրիկ պատկերը...

Գիտեմ, ընկեր, են ոջաղում կրակը մարել է արդեն. և մուխ
դիշերներին, շներ ռնոցից արթնացած՝ քո փոքրիկ տղան կըծ-
կվում է մոր գրկում և հարցնում՝

— Հայրիկը յերբ կգա։

Իսկ մայրը՝ արցունքները զսպելով ասում է.

— Շուտով, շուտով։

Ասում է ու կարծես հավատում, վոր դու կվերագառնաս...

*
* *

... Յերեկոն գալիս է Լուսմ եւ թնդանոթները։

— Ո՞վ հաղթեց, ընկերներ. մենք՝ թե՛ դուք... յեմ... թե՛ դու...

Լուսմ եւ մարդկային ձայներ.—յեկել եւ վերավորներին հա-
վաքելու։

Գալիս եւ շարժում դիակները, ապա հըում եւ ինձ ու ասում.

— Թող մնա, թող մեր թշնամին փտի եւ ամայի դաշտում...

*
* *

— Թող մնանք եւ ամայի դաշտում՝ արյունոտ ընկեր։

Մենք կապասներ գիշերվան, ու կեղևներ, կղարթեցնենք դե-
ակներին անթիվ ու կքայլենք դեպի քաղաքները քարահատակ...

Բուք ու բորանի հետ մենք կխուժենք ամենուրեք, շոխդ ու
չրիկոցով կբանանք փակ դռներն ու ներս կաանենք ցրտահալ,
արյունոտ մեր ճամարտությունը...

Մենք անհաղդորդ փողեր կհնչեցնենք, դժոխային սառսուռ

կտանք մեր դահիճներին, ու հրեղեն պատգամներ կնետենք աշ-
խարհից աշխարհ...

Ու կգա եւ որը.. Հաղթական կամարների տակով մենք կանց-
նենք նոր կյանքի շարքերով...

— Ընդունիր համբույրս՝ ընկեր, արյունոտ, կարմիր համ-
բույրս...

Կտրվել է մեր ընկերական շղթան. յեկ միացնենք ամճւր և
ամճւր...

Յեկ հանդչենք միասին եւ արյունոտ դաշտում մինչև յեկ-
նելը...

— Մինչև յեկնելը...

1915



ՀԵՔՅԱՔԸ

Այդ յերեկոյ յիւր ըստ սովորութեան՝ յերեկոսներս հաժարիւն է ելինք Մարգարի տանը և անհամբեր սպասում նրա խոստացած հեքյաթին:

Դուրսը ձյուն էր: Յերկար ձնադնդի խաղից հետո մենք ներս վազեցինք այն ժամանակ, յերբ Մարգարն իր համեստ ընթերցելով վերջացնելով, թիկնել էր թախտին, ոջախի մոտ, ու քթի տակ մըմում էր—«Ննջյա վարդան, անուշ քնով»...

Ոջաղում ծուլ-ծուլ թշնմում էին թաց փայտերը, լցնելով սենյակը ձխով: Մի թիթեղյա անառակի ճրագ, վորը կախած էր սեւացած սնից, հազիվ էր լուսավորում սենյակն իր աղբա լույ-

սով ու յերեկան հանում տան խղճուկ պարագաները—դիմացի պատի թարերն իր հասարակ ամանեղնով:

Մարգարի կինը յերեկոսները լվացն էր անում, լաթերը փռելով բուխարու մոտ, իսկ մայրը ծաղապատիկ նստած կրակի մոտ գուլպա յիւր գործում, ստեպ-ստեպ հորանջելով ու յերեսը խաշակնընելով: Յերեկոսներից փոքրերը քնած էին, իսկ յերկու տղաները խաղում էին մեծ, բրդոտ կատվի հետ, վորը ուշադրութեամբ չգարձնելով նրանց վրա, հանդիստ մոլորում էր:

Ամեն ինչ այնտեղ տրամադրում էր մի անգորբ, անյերազ քնի: Միայն մենք էինք, վոր պատրաստ էինք յերկար ժամերով նստել, միայն թե Մարգարը հեքյաթներ պատմեր: Ամբողջ գյուղում նրա նման հեքյաթ պատմող չկար:

* *

Յեւ Մարգարն սկսում է կարծես յերգելով, աչքերը փակ, կույր աշուղի նման, սկսում է պատմել իր սիրած են մեծ հեքյաթը՝ հրեղին թռչունի՝ և յերեք յեղբայրները մասին: Իսկ մենք շնչներս զսպած ազահութեամբ վորսում էինք նրա ամեն մի խոսքը: Ու չնայած դուրսը ձյուն—ձնու էր, մենք տեսնում էինք մըտքով մայիսյան դաշտեր ու ծաղիկներ, ջինջ յերկինք, ամբողջներ...

... Յոթը սարերի յետևում հրեղին թռչունն է ապրում իր վոսկի վանդակում: Ու նրա շուրջը հաստ, ամբակուռ պատեր են քաշած ու յերկաթի մեծ դռները մոտ սե, դաժան վիշապները հըսկում են գիշեր-ցերեկ:

Յեւ ան յերեք յեղբայրներ մեկ մեկու յետից գնում են ալդ հրեղին թռչունը փնտռելու, բայց միայն փոքր յեղբայրն է տիրապետում նրան—հաղթելով ամզահա վիշապներին: Մակայն ճամբին դաժան յեղբայրները, վորոնց նա ազատել էր վիշապներից, խաբելով իջեցնում են նրան հորի մեջ, ապա առնելով նրա վաստակած հրեղին թռչունը, թողնում են գնում...

* *

Հանկարծ դուռն շնմում շունը հաջաց և վազեց դեպի փողոց, միանալով ուրիշ շներին, վորոնք հարձակվել էին ինչպիսի անցորդի վրա: Աղմուկի մեջ դրսից լսվեց մի ձայն.

— Մարգար, այ Մարգար...

— Բեկը են կանչում,—հայտնեց Մարգարի կինը անհանգիստ, վախեցած ձայնով։

Մարգարը կարծես քնից նոր արթնացած, հոնքերը կնճած ահանջ դրեց, ապա վոտները ձգելով տրեխները մեջ ու գլխին փափախ դնելով՝ դուրս յեկավ փողոց։ Դուռը բաց մնաց և զրսից մի անախորժ սառնություն յեկավ, ցնցեց մեզ։

Նա շուտով վերադարձավ այլայլված դեմքով։

— Աղեն կանչել ա, ասաց նա և ցրտից ու հուզմունքից սրբված թափով, սկսեց ամբասնել իր տրեխները։

Նա գնաց, մենք էլ նրա յետևից տխուր դուրս յեկանք փողոց։ Չքացավ մեր յերեւակայությունից հրաշալի հեքյաթը. մեզ կծկում էր ձմրան ցուրտը, իսկ տները մութ անկյուններից. չաբաղաւաղ փափուկով կարծես դաժան աղայի անունն ելին տալիս, վոր կտրեց մեր վառ հեքյաթը...

* *

Բայց ինչո՞ւ այդ որվանից Մարգարը կարծես պապանձվեց, ու էլ յերբեք մենք չլսեցինք նրա հեքյաթները։ Յերկար ժամանակ մենք չեյինք հասկանում, բայց ահա մի որ, դարնան սկզբին մեր առաջ բացվեց տխուր դադանիքը։

Այդ որը յեկան յերկու աստիճանավոր տանուտերի ու նրա ողնականի հետ, յեկան նայեցին մարգարի տունը, ինչ վոր գրեցին։

— Յեկել են տունը վեր դրելու, լսում եյինք հարեաններից։— փող էր պարտ աղային, ժամանակին չտվեց, հիմի տունը խլում են ձեռքից...

Մարգարը կանգնել էր դիտակոր, անշարժ, քարացած դեմքով։

Միայն յերբ նրա ահանջին հասավ իր յերեխաների լացը (նրանք կարծում եյին, թե տանում են հորը բանտարկելու) մոտեցավ աստիճանավորին։

— Աղա, խնդրում եմ համբերեք... աշխատանք կանեմ, պարտքս կտամ...

Բայց աստիճանավորը չթողեց վոր նա իր խոսքը վերջացնի։

— Դնա քո պարտատերին խնդիր. որենքը չի համբերում։

Նրանք գնացին, բայց դեռ յերկար լսվում էր Մարգարի մոր աղերսական լացը, նրա հուսահատ զոչերը։ Սակայն զուր էր նա ծնկները թակում, ձեռքերը բարձրացնում. Մարգարի տունը խլեցին, իսկ դարնան վերջերին նա հեռացավ մեր գյուղից։

Ահա թե ինչու աղան կանչեց նրան են մութը, ցուրտ գիշերը, ահա թե ինչու կտրվեց հրեղին թռչունի հեքյաթը և յերբորդ յեղբայրը մնաց մութը հորում...

* *

Անցել են տարիներ...

Այն տղը, ուր Մարգարի տունն էր, յերեւում և փլատակների մի կույտ։

Միայն սկացած պատի մի բեկոր հիշեցնում է, վոր այնտեղից յերբեմն ծուխ էր յեկնում։ Պափանջված և վաղուց նաև ջրհորը տան առաջ, իսկ նրա տեղը յերեւում և կիսով չափ հողի մեջ թաղած մի բար։

Յեւ ամառվա լուսինը սահում է, անցնում, խորհրդավոր ըստ՝ վերներ ձգելով փլատակների վրա։

Ու ծղրիշներն անվերջ, անդադար կրկնում են յերգը տխուր։

— Այստեղ... այստեղ... յերբեմն մարդիկ եյին ապրում... ապրում...

Ու այս ժամերին թվում է, խափանված ջրհորից ձայներ են դաճիս... Են հեքյաթի յերբորդ յեղբայրն է, են ինքը Մարգարն է, վոր դնում է յեկնել մութը հորից...

Իսկ հեռուներից, յոթը սարի յետևից, ուր աղատ հովերն են ապրում, թռչելով գալիս և չորրորդ յեղբայրը. նա սլանում է ամպերից վեր իր կարմիր շոույգով, գալիս և ազատելու Մարգարին իր խավար բանտից...



ՎԵՐՋԻՆ ՏԵՐԵՎԸ

Որվա ծանր աշխատանքից հոգնած, բանվոր Մինասյանը յերեկոյան նստել էր սեղանի առաջ, ու գոգն առել իր մի տարեկան յերեխային: Նա զգում էր մի դուրեկան հանգստութուն, վոր տարածվում էր նրա ամբողջ մարմնով:

Նրա առաջ դրած էր մի բաժակ թեյ ու լրագիր. բայց նա ինքնամոռացութան մեջ թիկնել էր աթոռին և քնկղմվել անորոշ մտածմունքների մեջ: Յերեխան շարունակ վեր-վեր էր թրուշում դեպի լամպի լույսը, բայց միշտ հանդիպելով հոր ձեռքերին, վորոնք լայն գրկել էին նրան, դարձմանքով հետ էր նայում ապա նորից սկսում իր շարժումները:

Դուրսն անձրև էր, աշունքվա բարակ ու անընդհատ անձրև: Տները խողովակներից տաղակալի յերաժշտությամբ անվերջ թափվում էր ջուրը: Վերևի հարկից լսվում էին խուլ ձայներ, վոր թվում էր թե գալիս էին շատ հեռվից, մի ուրիշ աշխարհից:

Դրսից յերբեմն լսվող կառքերի ձայնը նրա առաջ պատկերացնում էր քաղաքի փողոցները, ուր լապտերները՝ խոնավության շղարշով պատած, օաղիսի նման գրավում էին հազվագյուտ անցորդներին: Ապա կառքերի հետզհետե մարվող ձայներին հետևելով, նրա յերևակայութունն անցնում էր քաղաքից դուրս, դեպի իրանց գյուղի մութ ու ամպի դաշտերը, տերևազուրկ ծառերը, անանցանելի ցեխն ու շները վրձնոցը:

Նա տեսնում էր իր մորը, նստած մեն-մենակ իր տանը, վառարանի առաջ:

Ի՞նչ է շինում աժժ այդ համառ կինը, վորին նա յերբեք չկարողացավ տեղափոխել քաղաք: Անցյալ օրը իրենց գյուղացիներից մեկին ասաց, վոր մայրը թեթե, վոթի վրա հիվանդ է. ո՞վ գիտե, ինչ գրության մեջ է... Նա յերբեք չի գալ քաղաք. նա իր գյուղի, իր տան հետ ամուր և կապված...

*
*
*

Դուրս բացվեց. ներս մտավ Մինասյանի կինը ձեռքերը մինչև արմուշկները բաց, հետը բերելով լվացքի հոտը: Նա սպիտակած, բշտած շատերով բռնել էր մի նամակ, վոր արդեն ճխվել էր ու կկոտորվել:

— Ետը մի գյուղացի բերավ, ասաց բարեկամ է, բայց յևս չճանաչեցի:

Նա նամակը գրեց սեղանի վրա և նկատելով վոր յերեխան անհանդիստ շարժումներով դեպի իրան է ձգտում, շտապով դուրս գնաց դեպի խոհանոց:

Մինասյանը վերցրեց ծրարը: Անշուշտ նամակն իր մորից պիտի լիներ, բայց ինչու այդ անգամ հասցեն գրած և ավելի վարժ ձեռքով:

— «Սիրելի վորդի, գրում եմ մայրը. քանի տարի յա, աչք» ջուր կտրվեց քեզ ճամբա պահելով: Որերը համարելով ապրում էյի միշտ աչքս դռանը, միշտ սպասելով, վոր հա՛ վորդիս կգա ու իմ ամայի տունը կշնացնի...

Ի՞նչ թաղցնեմ քեզանից. միշտ իմ սրտի խորհուրդն էն ա
եկել, վոր մի որ ել դու ընտանիքովդ գաս եստեղ ապրես, քու պա-
պերի, քու հոր ոջախի ծուխն ելի վեր անես... ու իմ սիրտն ել
փառավորվի, տեսնեմ աչքիս առաջ թոռներին ու հարսին. իսկ
դու յեւ ազատվես եդ թանդ ու կրակ քաղաքից: Ախր եդ ի՞նչ
կյանք ա, վոր ջուրն ել փողով հա առնում:

Եհ, ի՞նչ ասեմ, վորդի, գիշեր-ցերեկ մտածում եյի, ախ ու վիշ-
տնում, առավոտները վեր եյի կենում, տանը մտիկ տալիս. շատ
անգամ սիրտս փշաքաղվում եր, յերբ տեսնում եյի մի տեղ գերանը
փտած, մի տեղ կտուրը քանդված: Ինչքան եմ ձեռքերով, մատներով
չարչարվել, վոր մեր տունը քանդվելուց ազատեմ: Յերբ ուրիշներն
եկ ելին ասում, թեա ավելի յեր կոտրվում... Հայ տունդ քանդվում
ա, հայ մենակ մնացելը, տղեդ մոից հանել ե քեդ... Յես լսում
եյի, մեջո լաց լինում, համա բերանիցս մենակ մի խոսք եր դուրս
գալիս:

— Հո՛ւսով եմ, հո՛ւսով...

Բայց դե ի՞նչ արած. իմ բազդն ուրիշ բան բերեց... Մի որ ել,
գիշերվա մեծ անձրեից հետո, յերբ տանից դուրս եյի գալիս՝ շեմ-
քը փուլ յեկավ, գերանի ծերը դիպավ ուսին ու ջարդեց, շատ չան-
ցած մնացածն ել քանդվեց ու յես մնացի ուրիշի դռանը: Մի շա-
բաթ ա պառկած եմ քվորս տանը: Տեսա, վոր հալս հալ չի, ես որ
կանչեցի մեր վարժապետին, վոր ես նամակը դրի, ինչ վոր սրտու-
մս պահած ունեմ, իմ աղիդ վորդուն իմաց անի...

Ո՞վ գիդի, կարելի յա մինչեւ ես նամակ տեղ հասնել, յես կեն-
դանի չլինեմ. ու թե ես ել իմ վերջին խոսքն ա, վորդի, ելի ասում
եմ՝ հուսով եմ, վոր դու կգաս, մեր ավերակ տունը կշինես, քու
ոջախի տերը կլինես:

Մնամ քեդ սիրող ե քեդ կարոտ մնացած մայրդ...

* * *

Մինասյանը մի շնչում կարգաց նամակը. նա զգաց, վոր մայ-
րը մեռած է. գիտեր, վոր միայն վերջին բոպեն կարող եր իր հա-
մառ մորը ներշնչել այդպիսի նամակ: Ու տարին հերով թագնված,
անթեղված զգացումներն սկսեցին շարժվել իր մեջ: Խորին ափսո-
սանքը, խղճահարուխը ըռնեց նրան:

Նա ճգնում եր պատկերացնել մորը, բայց իզուր. կարծես գիտ-

մամբ նա ծածկում եր դեմքը, հեռանում դեպի հավիտենական
լուսթյունը...

Դրա տեղը դալիս եյին մանկական հուշերը, յերբ ինքը գյու-
ղումն եր, մոր փեշի տակ: Հիշում եր՝ մի որ, աշնան վերջերին
յերբ սաստիկ քամուց հետո իրենց տան առաջի թթենին քամուց
մերկացած, տխուր նայում եր: Յեւ ինքը, վոր միշտ մանկական
հետաքրքրությամբ հետևում եր տերևաթափին, վորովհետեւ ուզում
եր անպատճառ նկատել, թե յերբ կընկնի վերջին տերևը, այս ան-
գամ տեսավ, վոր մի հատիկ տերևն է մնացել ծառին: Ու յերբ ցույց
տվավ մորը, նա ասաց.

— Տերևը վորդին ա, ծառն ել մերը եդ մեկ. տերևը շատ ա
սիրում մորը, չի ուզում բաժանվել... Դու յեւ թե ինձ շատ ես սի-
րում, ինձանից չես բաժանվիլ...

... Մինասյանը նորից վերցրեց նամակը, վոր մի անգամ
եւ կարդա, բայց յերեխան հանկաքժ մի ճիշ արձակեց ու ճանկե-
լով նամակը, վայր գցեց ներքե, սեղանի տակը:

«Վերջին տերևը... անցավ նրա մտքով, — վերջին տերևն ել
ընկավ»:

Յեւ արցունքի յերկու կաթիլներ հանդարտ սահեցին նրա աչ-
քերից...

1916





ԱՆՅՅԱԼԻ ՆԻՐԶԸ

Քաղաքի բազմամարդ շուկայի արևելոյ մի անկյունում
նստած և ծեր գինեւաւը:

Նստած և նա մի խարխուլ արկղի վրա ու հենված պատին՝
նիրհում և անշարժ, վորպէս մի արձան:

Նրա լայն, խորշումած դիմքն իր լերկճուղ սփռտակ մորուքով
ու ծխախոտից գեղնած յերկար բեղերով՝ քանդակված և այն հին,
անցած վոճով: Նրա խիտ հոնքերի սեջ խոր ակոսված կնճիռնե-
րը, վոր յերբեմն հրամայողին տալիս էյին խրոխտ արտահայտու-
թյուն, այժմ ել վոչ վոքի վրա չեն ազդում, վորպէս հնացած, ճառ
սովոր դիմակները, վորոնցից յերկխաներն ել չեն վախճանում:

Իր զինվորական խուճանացած զլիարկը, վարել ճակատին դեռ նշմարվում էր հանած կոկարդի տեղը, իր վերարկույն,—նույնպես խուճանացած, և փայլուն մետաղյա կոճակները սեփերի փոխած՝ պատմում են անցյալի փառքերը...

Առջևը փռած մի քանի հնադույն զրբերն ու իրերը նա կարծես չի ծախում, այլ միայն հսկում է, վոր նրանք չշարժվեն տեղից:

Անցյալ դարու պատերազմների պատմություններ, մի զինվորական դասագրքեր, հնադույն թվաբանություն, մի կապույտ անկաղձ զրբեր,—զինվորական կանոնադրությունների մասին, մի կեղտոտ, փլված աստվածաշունչ, և Պերճուպես, փամփուռաճանից շինված մի սեղանի վարդաբանը—ահա այդ էր նա շուկա բերել ծախելու:

Շաբաթներով նստած և նա անշարժ, և սակայն իր բերած իրերը մնում են իրենց տեղերում, և նայողին թվում է՝ թե նրանց տերը ցանկություն էլ չունի վոչ ծախելու և վոչ խել խոսելու, այլ միայն ննջելու, խոր ու հավիտյան ննջելու...

Յեվ կարծես ամեն անցնող փոստում և խանդարիկ այս ներդաշնակ, արձանացած լուսթյունը:

Ահա մոտենում է մի պառավ կին, բաց է անում աստվածաշունչը, ապա վերցնում գիրքը և մոտ բերելով ձերուհուն, հարցնում է.

— Պապի, ինչ արժեք սուրբ գիրքը:

Պապը չի դարձնում:

Կինը նորից կանչում է:

Ծերունին բաց և անում աչքերը, անթարթ նայում կնոջը, կարծես ուղենալով հիշել, թե վճռեղ է ինքը և ինչ է անում, ապա նկատելով իրան մոտ բերած գիրքը, սկսում է մտաբերել թե ինչ արժեք նա:

— Հարյուր հազար,—լսվում է նրա խոսքից, մաշված ձայնը:

Կինը՝ ասես վախենալով այդ տարրերինակ ուրվականի ձայնից, պատկառանքով վայր է դնում գիրքը և լուռ հեռանում:

Նորից ներհում է ձերուհուն ու նրա հետ կարծես ներհում են իր ծախու բերած իրերը:

Այլա մոտենում է նրան հնավաճառ թուրքը, վերցնում է անկաղձ զրբերի կապույտ ու բարձր ձայնով կանչում.

— Ե՛յ, թավարի՛շ, վո՞նց ես ծախում ես գիրքը:

Ծերունին բարձր ձայնից նորից դարձնում է և դարձացած նայում թուրքին, կարծես ուղենալով իմանալ, թե ի՞նչ կապ կա իր և այդ «փողոցային» մարդու մեջ, ապա վերջապես նկատելով բարձրացրած զրբերի կապույտը, ձեռքով ծանր ու դանդաղ նշան է անում, թե չի ծախում:

Նա արդեն մի քանի անգամ փորձել է և գիտե, վոր այդպիսի թուրքերը քաշով են առնում և զին չեն տալիս:

Փողոցով անցնում է Կարմիր բանակի մի վաշտ, խրոխտ ինտերնացյոնալի նվագով: Գեներալը ցնցվում է, դարձնում, ապա ձայնի հեռանալուն պես, ննջում է նորից...

... Ներհում է ձեր գնեքալը, անխռով ու անշարժ, վորպես մի արձան, ներհում են նրա հետ և իր շուկա բերած իրերը...

է922



ԱՆՑԿՈՐԸ

Քաղաքի ամենալավ փողոցով—յիբրեմն այնքան սովոր է այժմ անչափ խորթացած, անցնում է նախկին հարուստ Աղասյանրո Մի ժամանակ նա թեթև սլանում էր ավտոյով, կոռքով, իսկ այժմ անցնում է հազիվ վոտները քարշ տալով, սակա ամեն ինչ հետ է մղում նրան, ամեն ինչ փշերի նման կառչում է շորերից։ Յերբեմնի գեր մարմինն իր արդեցիկ, հաստ փորով, այժմ ներս է ընկել, նիհարել։ Ու բիկ յերկծալ կաշիները, վոր նրա կառքողության ուժն ելին ներշնչում, այժմ դատարկ կախ են ընկել ու շարժվում են, վորպես ավելորդ լաթեր։

Մի ժամանակ յերեք բժշկով պահված արժամարմինն այժմ ընդ-թյան կամքին հանձնած թանջում է, հեռում խաբխուլ կառքի նման։

Մանր ջուհյը չի հնազանդվում, խեղդում է նրան, ջրակալած աչքերն այրվում են ու ականջները թշրում անհանգիստ ժխորով։ Ու ջուրջն ասես բոլոր ձայները կանչում են միաբերան.

— Անցիբր... անցիբր...

Ձեռքին բռնած մի կեղտոտ տոպրակ՝ մեջը մի կտոր հաց, պնում է նա ու անխժում է աշխարհը—վոր դարձել է նրա համար մութ գերեզման։

Վողջը անցյալում՝ վորին տիրում էր վորպես իշխան, նա կուգեր չբացած լինել այդ անցյալի հետ...

Բայց ինչ... նա ապրում է տակավին, կենդանի յի ու կարծես մեռած, շրջում է վորպես ուրվական։

Փողոցի անկյունում, իր նախկին պալատի առաջ նա կանգ է առնում փոքր ինչ շունչ քաշելու։

Ո՞վ է այս փողոցի անկյունում իր տունը նորոգում։ Անշուշտ խելագար է նա, վոր ջինում է, նորոգում...

— Հի, չեմ ճանաչում, յես Արշակն եմ, ես տունը ջինողը։

— Արշակը... վճի Արշակը։

— Ես տունը ջինողը։ Միտդ մի, վոր ինձ խոստացար, ասիր տունը վերջացնելուց հետո մի ձեռք շոր կտամ... Խոստացար ու վերջը չտվիր։ Ե՛հ, հիմի տունը մնաց իր ջինողներին...

— Արշակ, գո՛ւ ես, ո՛ւմ համար ես ջինում... Թնո՞ւ տուր։ Ե՛հ, ինձ համար ջինեցիր ես պալատը, բայց ո՛ւմ ձեռն ընկավ, ինչ որին հասա յես...

— Հի, ասեցի, չի մացա՞ր... տունը մնաց իր ջինողներին...

— Ե՛հ, մի նորոգվիր, թող քանդվի, կործանվի ամեն ինչ...

Ասում է ու չտալում հեռանալ այս անհյուրընկալ վայրից, ուր ամեն մի հիշողություն փշի նման ծակում է նրա սիրտը։

Իսկ Արշակը՝ բարձր շվացնելով շարունակում էր իր գործը։

... Անցնում է նախկին տերը, հազիվ վոտները քարշ տալով, դնում է ու անխժում է աշխարհը, վոր դարձել է նրա համար մութ գերեզման։

Ու փողոցի անհանգիստ ժխորը միաբերան թշրում է, կանչում է նրա ականջին.

— «Անցիբր... անցիբր»...

— Գնեք ես պատի ժամացույցը, լալն ե, կծառայի ձեզ
յերկար, անխափան... Տեսեք, ինչ պինդ փայտից ե... Գուցե կու-
ղեք պահարանը..

Ասում եր պառավ կինը շուկայի անկյունում, ցույց տալով
հին, փորը դուրս ընկած պահարանն ու նրա վրա դրած ժամա-
ցույցը։ Նրա դեմքը, բազմաթիվ կնճիռներով ակոսված է, նա ա-
ղերսանքով նայում է ամեն անցնողի ու խոնարհ, հնազանդ աչքի-
քով սպասում պատասխանի։

Սակայն անցորդներն աչքի տակով նայում են այդ տաքորի-
նակ, հին իրերին և վոչ մի կապ չզգալով նրանց հետ, հեռանում
են՝ մեկը ժպտալով, մյուսն ուսերը վեր քաշելով։

Ճիշտ վոր տարրերնակ ժամացույց է՝ նա այնքան հազվա-
դուրսն է, վոր այժմ ել ընկեր չունի։ Կինամոնազույն, տեղ-տեղ
մաշված ու զեղնած՝ ներքեր լայն, ասես ծալապատիկ նստած
բուդդայական կուռք լինի, նույնիսկ աչքեր ել ունի, վորոնց տեղ
բանավիճակն անցքերն են ծառայում։ մեռած աչքեր, վորոնք նա-
յում են քարացած հայացքով։ Համեստ, նիհարած թվանշանների
շրջանակի վրայով պտտում են վախկոտ սլաքները, ասես ամա-
չելով իրենց շարժումը։ Իսկ ճոճանակը—լայն պղնձե այդ ստրու-
կը, ծանր հեղուկ անցնում է աջից՝ ձախ, ձախից աջ, ու ամեն
անգամ հասնելով մեջտեղը՝ ասես դադարի տեքում է մի հին
ցավից ու նորից շարունակում իր ճամբան, միալար ու տաղտուկ։
— Զբ՛ղ... չբ՛ղ... չբ՛ղ...

Ու այս հին որերին ներգաշնակ է և պառավը՝ զրեւսը։
Նրա սև շորերն ու դիւարիկը հազնում եյին տարիներ առաջ, իսկ
այժմ նրանք հնուկթյուն են, թեպետե խնամքով պահված։

— Գնեք ես ժամացույցը, — կանչում է պառավ կինը, — իսկ
յեթե կուղեք, այս ալբոմն ել կծախեմ։ Չառ դեղեցիկ ե... լավ հիշա-
տալ... Եհ, չեյի ծախիլ բայց ինչ արած...

Սակայն անցորդները դարձյալ չեն դնում վոչ մի բան։ Պա-
ռավը բոպեապես լուծ է և բաց անում ալբոմը։ Պատահմամբ նա
թողել է մեջը ամուսնու պատկերը... Ահա և նա, — որինավոր մո-
բուքով ու բեխերով, ակնոցավոր, խոժոռած դեմքով մի մարդ, վոր
միշտ վախ եր ազդում ամենքին, նույնիսկ իր կնոջ վրա, մանավանդ
յերը հազնում եր իր փայլուն կոճակներով՝ մարմնին պինդ կպած
համազրեւսը։

Կինը նայում եր պատկերին ու բոպեապես սկանում մտքով
զեպի անդարձ անցյալը, տեսնում է մի ընտանիք, ուր ամեն ինչ
«որինավոր» եր ու հլու հնազանդ, տեսնում է մի լուռ, ծանր կա-
հավորված սենյակ, սեղանի մոտ մի դաժան ամուսին, նրանից քիչ
հեռու, մյուս սեղանի շուրջը՝ դասերը սերտող վախկոտ յերեխային
ու... լուռթյուն, լուռթյուն։ Նույնիսկ հեղտայեռն ասես վախե-
նում եր պինդ ձայն հանել իսկ ինքը՝ կինը, վորը փափուկ եր նրա
շուրջը, վորքերի ծայրերով եր ման դալիս, վոր չզրդոի իր ամուս-
նուն... Այդպես եր և աղախներ, վոր համարյա չեր խոսում, այլ
միայն կատարում եր հրամանները աչքերը ցած դրած։

Ցեղ ժամացույցը, այդ հնազաբյան կուռքը, իր բուր աչքի-

բով ասես լուռ նայում եր ու հավանութիւն տալիս այդ կաշկանդ-
ված կյանքին: Իսկ ճոճանակը դսպլած անասունի նման անցնում
եր աջից ձախ, ձախից աջ և միայլար ձայնում եր ու հաստատում՝
—Այդ-պէս... այդ-պէս...

Կինը նայում և ամուսնու պատկերին, խորասուզվում ան-
ցյալի մեջ ու մոռանում, թե վորտեղ և ինքը և ինչ և անում:

Նրա մոտով անցնում են բարձր քրքիջով մի խումբ դպրո-
ցականներ, —սիրենքներ, կինը սթափվում և, վախենում, ապա
նորից սկսում:


—Քնեք ես ժամացույցը, շատ լավն է, տեսեք ինչ ամուր
ե... Նա կծառայի ձեզ յերկար, անխափան...

Պոչ վոք չի մոտենում են հնավանդ, յերկու թաղավորների
զրջանով անցած ժամացույցին, վոք մըայն ինքը դիտե, թե լինչպիս
խաբխուղ և իր ներսը, թե ինչպիս տաքիները խանդարել ու մո-
շել են իրեն...

Իսկ ճոճանակը պառավ-պառավ շարժվում և աջից ձախ,
ձախից աջ, և հասնելով մեջտեղը, կարծես դադարի անբուժ և
մի հին ցավից, հառաչում և ու կանչում:

—Մեռնում եմ... մեռ-նում եմ...

1984



ԽՄՈՒՆԱՐԱՐԸ

ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԶԵՋ ԱՅՍ ԳԼՈՒԽԸ.

Սերելի ընկերներ.

Ուղարկում եմ ձեզ այս գլուխը, վորն ուղում են կտրել...

Ուղարկում եմ ձեզ իմ պատկերը, վոր յես ինքս նկարեցի...

Այսօր սոսալոտից կոմունայի վերջին մահկանանքին ձգել են մի դարպաս, վորտեղ մեզ միախառնել են մեր սպանված բնիկերների հետ:

Քայլում եմ ընկերներին աբյուսի վրայով, դիպչում եմ նրանց զիակներին...

Գիտեմ, մենք ել կվնանք նրանց մոտ. մեր ճակատներին ել մահվան դատավճիռն է դրած...

հետքերն ներսն առավ Վերսալի սպաներից մեկը՝ արքած, դա-
շագած անթիվ սպանություններից:

Անյավ դարպասով, ապա կանդ առավ մի գիւղի առաջ, վորի
ուղեղը փռված էր գետնին:

Վոտքի կոպիտ հալվածով նա ցրեց ուղեղն ու ասաց գիւղային
հեղանքով:

— Նրանք սրանով մտածում էյին... հա... հա...

Նայում էյի սպայի հղիացած զեմքին ու մտածում:

«Կանցնեն ժամեր, դուցե միայն բոսկներ և յես ել կընկ-
նեմ այն կոպիտ վոտքերի տակ»:

Ու մի միտք անյավ գլխովս.— ուղարկել ձեզ լավագույնը, վոր
կմեա մահիցս հետո— իմ ձևորով նկարած պատկերս:

Թող այնուհետեւ վորքան կուղեն քաշկուտն գետնին իմ գլուխը
Նա կապրի ու կխորհի իր ապրող ընկերները: հետ, կպատ-
մի նրանց կոմունայի վերջին ժամերից...

Ու պատգամներ կտա, վոր մեր խորունկ դատը հանձնեն գա-
լիք օրերին...

Ո՛վ ընկերներ, կմոռանա՞ր յերբեք մեր դահլճներին...

Կթողնե՞ք յերբեք, վոր մեր լավագույն իզձերը ընկնեն կոպիտ
վոտքերի տակ...

Մե՞ք բարով, ընկերներ...

Ուղարկում եմ ձեզ այս գլուխը, վոր ուզում են կարել...

1923

ՎԵՐՋԻՆ ԲԱՐՐԻԿԱԴԸ

Յես հիշում եմ, յես սիրում եմ այն օրերը
Յեր կեռասնին և կարմրում...

Սայիտին եր' կոմունայի վերջին օրը:

Հերոսական կռիւց հետո ընկալ գերեզմանատան գլխավոր
գրքը և կոմունայի վերջին ուժերը գիւղացին գետնի մոտակա փո-
ղոցի բարրեկազր:

Սյնտեղ էյին հավաքվել կոմունայի հերոսները՝ դարգարված
կարմիր ժաշակներով:

Հսկայական կարմիր դրոշմ ծածանվում էր բարրեկազրի վրա:

Որհասի ժամերն էյին. մոտակա Սեն-Մորի գերբն ընկնելու
վրա յեր: Նրանից վոչ հեռու՝ սյուս բարրեկազրի վրա մնացել էր
միայն մի մարդ, բայց համառութեամբ շարունակում էր կռիւլը:

Մի փոքր անց՝ հեկհեկ վազում և դեպի բարբրեկազը մի աղ-
ջիկ:

— Գալիս եմ ձեզ ողնելու,— կանչում և նա, ներքևից Յես
Սեն-Մորից եմ գալիս... Նա արգեն ընկալ...

— Ընկնի՞... արձագանքում են վերևից.— մի գալ, այստեղ
ամենավտանգավոր դերքն և մի գալ...

— Վե՛հ, յես յեկել եմ ողնելու և պիտի ողնեմ...

— Բարձրացիր:

Վերջին բուսկներն էլին:

Հերոսները լցրին թնդանոթները ազդամթերքի մնացորդնե-
րով ու արձակեցին... Վերջին անգամ...

Լավից թնդանոթի վորոտը, ապա ամեն ինչ լռեց...

Կոմսուհան ընկալ...

Բայց դեռ յերկար տարիներ հիշվում էր այն վերջին բարբրե-
կազը և այն անձնվեր հերոսուհին, վոր յեկել էր ողնելու:

Ու մի բանաստեղծ յերդ հորինեց նրա վրա, վոր սկսվում ու
վերջանում էր այսպես.

«Յես հիշում եմ, յես սիրում եմ այն որերը,
Յերբ կեռասներին և կարմրում...

Ու յերկար տարիներ բանաստեղծը տեսնում էր կեռասներին
կարմրելու որերին՝ միշտ մի աղջիկ էր գալիս չըջում, վերջին
բարբրեկազին ողնելու համար...

Յե՛վ վերջան տխրում էր սղջիկը, յերբ նոր բարբրեկազներ չէր
դանում, վոր հնա նրանց ողնելու...

1823

5



Ա Ն Մ Ա Շ Ը

Ընկալ կոմսուհան:

Բյուրավոր գեղեկներ իջան գերեզման:

Սակայն նրանց գերեզմանները հանդիստ չառան:

Անընդհատ շարքերով գալիս էին տեսության, գալիս էին
պաշտելու՝ վորպես վաղեմի սրբավայրերը:

Զինվորները կոպիտ հայհոյանքներով հեռացնում էին այցե-
լող կանանց, բայց ո՞վ կարող էր նրանց առաջն տռնել:

Սակայն դահիճներն համար սարսափելին այն էր, վոր շատ չան-
ցած՝ գերեզմաններն սկսեցին կարմրել... Անձնվեր կանայք բերում
էին լրենց հետ կարմիր ծաղիկների սերմեր ու ծածուկ սփռում
գերեզմաններէ վրա:

Ո՞վ է այն համառ կինը, վորը միշտ թարմ է պահում այդ ծաղիկները:

Վորը գիշերներով պատում է կոմունարների գերեզմանների շուրջը՝ կարծես հսկում նրանց:

Հարցրեք այդ կնոջը և նա ձեզ կպատմի.

— Իմ ամուսինը յերեք հեղափոխութեան է մասնակցել...

Յերկու հեղափոխութեանից հետո նա վերադարձել է... կլի-բաղանա և այժմ...

Յես գիտեմ՝ նա կենդանի չէ. յես սպասում եմ նրան ու թարմ պահում՝ են ծաղիկները...

Յեվ գիշերները մեր տան դռները միշտ բաց եմ թողնում, վոր նա գա ու կամացուկ ներս մտնի...

* *


Անցնում են տարիներ, բայց գերեզմանները կարմիրը չի թա-ռամում:

Անցնում են տարիներ, բայց են համառ կնոջ յեռանդը չի մա-րում:

Յերբեք, յերբեք նա չի հալատում, վոր իր ամուսինը՝ կո-մունայի հերոսը մեռած է:

Յեվ մութ գիշերներին դռները բաց՝ սպասում է նրա դա-րուն:

1923



ԿԱՐՄԻՐ ԼԵՐՈՍՈՒՅԻՆ

Պատում են, վոր այն մեծ կովի գիշերը, յերբ վողջ քաղա-քը ասես յեռում էր ու գորշ ալիքներով հոսում դեպի դիրքերը, այն տենդոս փողոցներով մեծերի հետ քայլում եր նորաբողոք մի դույզ...

Նրանք թողել էին տանը իրենց մայրերի խրատները՝ չմաս-նակցել մեծերի կովին, և թիթեռների նման ձգտում էին դեպի կրակը՝ դեպի վտանգը:

Նրանք անցնում էին այն մեծ թաղերով՝ մրոտ դեմքերի ու ջլուտ բազուկների այն թաղերով, ուր գործարանների հսկա ծըխ-նելույզները՝ նոթերը կիտած, խորհրդավոր լուռությամբ դիտում էին ամեն ինչ:

Ամբոխի հետ նրանք հասան լայնատարած մի հրապարակ, ուր
խմբվել էին հազարներ և անհանդիստ ծփում, սպասում էին...

Վերջապես ձայն յեկավ վերևից:

Ո՞վ եր խոսողը,—մթնում էր յերևում. միայն նրա կողմը
նշմարվում եր լապտերի առկայծող լույսը:

Աղջիկն ու. տղան նայում էին, ականջները լարում: Հեռվից
նրանց թվում եր, թե խոսողն են կայծն ե, թվում եր, թե շուտով
կիջնեն յերկրի վրա բազմաթիվ կայծեր, և կիջնի լուսեղեն յերջան-
կությունը...

Բայց հանկարծ ամբոխն իրար անցավ:

— Գալիս են... անցավ բերանից բերան: Յեվ բոլորը շարժվե-
ցին առաջ...

Լավեց համազարկը...

* *

Գետնի վրա դալարվում էին վերափոխները...

Նրանց հետ մի աղջիկ եր ընկած ու նրա մոտ մի տղա, վորը
կարծես իր շնչով ուղղում եր կենդանացնել նրան:

— Յես շուտով կմեռնեմ, շնջում եր աղջիկը, բայց կուզեյի
դեռ յերկաթ ապրել ես կուզեյի հետ: Յերբ յես կմեռնեմ... տաբ
ինձ, կանգնեցրու առաջին շարքում և թող արևի շողքերը մի ան-
գամ ել փայլեն ինձ վրա...

* *

Առավոտ եր:

Այն մեծ փողոցում՝ բարրիկադի վրայից նայում եր արևին
կարմիր շորերով մի աղջիկ:

Քանի անգամ թշնամին հարձակվեց այդ գլրքի վրա, բայց
աղջիկը դեռ կար իր տեղում:

Նրա շուրջն ընկնում էին հերոսները, նորերը գալիս՝ նրանց
տեղերը բռնում, բայց աղջիկը մնում եր անսասան իր գլրքում:

— Ո՞վ և են անհաղթ աղջիկը... Այս ինչ հրաշք ե, ասում եր
թշնամին ու նորից հարձակվում, նորից նահանջում «Կարմիր աղ-
ջիկ» բարրիկադից:

* *

Պատմում են, վոր այն մութ գիշերները, յերբ մարում են
լույսերն ու հույսերը, կարմիր հերոսուհին իջնում ե, պատում փո-
ղոցները:

Եւ յերկաթի մուրճով բաղխում ե դռները, դուրս ե կանչում
իր հերոսներին:

Կանչում ե նորից դեպի դիրքերը՝ դեպի հաղթություն...

1913



Մեղադրյալները նստարանի վրայի կոմունայի առաջնորդը, նստած ե հանգչեստ աւ անվհեւը, վորպես վաստակած բանվորն իր աշխատանքից հետո:

Նրա լայն ճակատից, խորաթափանց աչքերից ալիքներ են յիջնում դեպի հեռունները, դեպի միլիոնավոր ընկերները, վորոնք արտատրոփ սպասում եյին դատի վախճանին:

Նա լավ գիտէ, վոր այս դատարանը լոկ թատերաբեմ ե, մի գլարճալիք հոնգիսականների համար. նախ քան դատելը նրանք արդեն դատապարտել են և այժմ միայն հանդիսավորությունն ե պրավում նրանց...

Ահա խոսում ե չոր դեմքով, նուրբ ածիլված դատախազը, ձեակերպում ե զարգարուն բառերով հին որենքի վրիժառությունը:

«Դատապարտել մահվան»,—հնչում ե նրա բերանից, և այդ բառերն ընկնում են հանդիսականների ականջը, վորպես անձերը չոր անապատի վրա... «Մահ»,—կրկնում են նրանք իրար, վորպես ուրախալի մի ափետիք...

Բեմ և յիջնում «նշանակված» պաշտպանը. չէ՞ վոր նա յեւ անհրաժեշտ ե ծիսակատարության համար. մանր ձեականություններով նա պիտի քողարկէ այդ արյունոտ դատը... Խոսում ե մանվածապատ, անորոշ բառերով ու ափկի դատապարտում և, քան պաշտպանում...

Դատավորությունը յերկարում ե՞ դրսի գլնվորներն անհամբերությունից տրոփում են վտարելով, փնթփնթում:

— Ի՞նչ են յերկարացնում... Կոմունարները հետ յերկար չպետք ե խոսել,—մեկ-յերկու, խփե՛ք ու պրծա՛վ... Ե՛յ, ասե՛ք, վոր շուտ ուղարկեն են աղխարհը...

* *

Հերթը հասնում ե մեղադրյալին՝ կոմունայի առաջնորդին: Հետաքրքրությունը կրկնապատկվում ե այս տարրերինակ հերոսի վրա:

Յեքաժշտություն և հնչում նրա խոսքերից, սիրենայի պոլսթոյ ձայնը...

Ինչո՞ւ յեն ներսի գլնվորները, քաբացել, ականջները լարել ու վորսում են ժոշ միայն բառերը, այլ նույնիսկ նրա շնչառությունը:

— Ա՛խ, յեթե առաջ լսեյինք այս կոմունարին... Ինչպե՞ս և նա վտոււմ մեր սրտերը...—ասում են իրար գլնվորները:

Կ Ա Ր Ա Պ Ի Յ Ե Ր Գ Ը

Դատարանի դահլիճը գրավել եյին հին կարգերի փայտու՜ն աստղերը,—գինվորականներն իրենց շքեղ համազգեստներով՝ գոռոզ ու փքված նոր տարած հաղթությամբ, պճնադարդ, չլարված տիկիները՝ հետաքրքիր հայացքները դամած մեղադրվող կոմունարներին. հարսակալած, քաղցեհները՝ գիշատիչ վոխը նոթած իրենց կնճռոտ հոնքերում:

Յեկել եյին մեծ հանդեսի՝ յեկել եյին տեսնելու նոր պարսկած կոմունայի դատը:

Բոլոր մուտքերը պաշարված եյին գլնվորներով,—դատարանի զավթում, դուրսը, փողոցում, ամեն տեղ՝ գլնվորներ, գնդադիրներ...

—Հոգիները հմայող եւ նրան լսելով, ամեն ինչ կգոհես... ասում ե մի ուրիշը:

—Շուք ինձ դատում եք—չարունակում ե կոմունարը.—յես չեմ խնդրել արդարացում. յես չեմ ցանկանում դեր խաղալ ձեր կատակերգութեան մեջ... Մահը... բայց յես չեմ վախենում նրանից... մենք—կոմունարներս, մահվանից միայն արձակուրդի լինք յեկած:

Յես միայն կուզեմ պարզել կոմունայի թղտկերը, աղատել նրան ձեր կեղծիքներից, աղավաղումից...

Խոսում ե կոմունարը իր վերջին թափով, վառվում ե իր վերջին դուրբող յերգով. հանդիսականների առաջ պատկերվում ե պարտված կոմունան, վորպես անհաղթելի մի դրոսեթյուն...

—Շարժվել ե այժմ ամբողջ աշխարհը, ե այդ ալեկոծ ովայանի առաջ անդոր են ձեր բոլոր ջանքերը...

Շեմ վ յես ասում եմ,—մոտ ե այն օրը, յերբ դուք ինքներդ կը դատվեք ձեր դատապարտած բանվորութեան ձեռով...

Անհանդիստ շարժում ե անցնում հանդիսականների մեջ. մի բոպե նրանց թվում ե, թե նորից ապրում են այն ահալի, կոմունայի օրերին...

Իսկ զինվորները, զլխովին հմայված՝ շրջապատել են հերոսին ու նորից սպասում են նրա խոսքին...

Ու մինչդեռ զբաւ զինվորները տրոփում են վտանքով, ու անհամբեր մոմում—«չուտ արեք սպանեք»,—նեւսի զինվորները, մուսացած կարգ ու կանոն՝ դռնում են անվերջ.

—Թող խոսի, թող խոսի կոմունարը...

1924



ԽԱՆԳԱՅԻ ՅԵՐԳԸ

Ամեն ոք, այն բանուկ փողոցում անցորդները լսում էին Մանեղի ձայնը՝ նրա սրտմաշուկ խալիչայի յերգը:

Յերգին ձայնակցում էր վտիտ մի սազ, վոր Մանեղի մատները տակ հառաչում էր խուլ ու ճնշված նվագով: Չայնակցում էր Մանեղին և իր փոքրիկ տղան, վոր թեք կոտրած ճուռիկի նման սմքել, կծկվել էր ու մեխվել դեմնին, արձանացել իր հողագույն գեմքով. նա որորվելով յերգում էր ակամա, կրկնելով հոր խոսքերը.

—Յի, խալիչա, խալիչա...

Յերգում էր Մանեղը, դիմում անցորդներին առավոտից

մշինչե յերեկո: Նրա դիմքը քամուց ու փոշուց ծեծված՝ զգզված մորուքով ասես այրվում, հանդչում էր անընդհատ: Հարյուր տեղից պատռոտված մի ձորձ վրան, թաղիքի մաշված թասակը գլխին, նա իր սիրտն էր բանում քաղաքի առաջ, վրը սովի մեջ դալար-վող ընտանիքը պահի:

Անցնում էր աշխատավորը, լուռ՝ յերգը, լուպեպպես կանգ էր առնում, հիշում են որերը, յերբ Մանմեղի աչքերը տեսնում էին արևի լույսը, յերբ նրա յերեկոան խաղում էր, վազվզում...

Մտնում, ձգում էր իր պղնձե լուաման, տխուր մտածում հարվածող բազկի մասին, վրը իրեն էլ է գուցե սպասում Մանմեղի սե որը...

Մտնում էր յերեկոն նաև կուշտ, յեղակայած վաճառականը տապով ձգում էր գլխին մի մաշված շահի ու խոլորում ալլահիյ-վրը հեռու պահի իրեն կույր Մանմեղի դամաթից...

* *

Յերեք տարի առաջ էր, յերբ Մանմեղը ամեն առավոտ, դեռ լույսը չբացված, շալակում էր իր սղային ու շտապում դեպի քաղաքի ծայր՝ խալիչայի արհեստանոցը: Փողոցում նա պատահում էր իր նմաններին՝ Ստրուկների շարանն անցնում էր միմյուր խաբա-փելով, փոտքորիկ, պատռոտած շորերով, կսկծալով վոսկրացավից, ծանր գլուխներով ու քաղցած փողով Շատերը Մանմեղի պես վոսկրացավով հիվանդ յերեխաներին շալակած տանում էին իրենց ողնելու, վրը փոքր ինչ ավելի ստանան: Անիծում էին ու գնում, ինչ վրը ստանում էին, հացի փող էլ չէր դառնում, գնում էին մեռնելու—ապրելու համար:

Քաղաքի ծայրին, խոնով, կիսավեր դարբասում լույսը բացվելուն պես սկսվում էր տաժանակիր դործը՝ Ամենքը բրդնում էին իրենց տեղերը դազգահներին մոտ է Մանմեղը՝ նկարն առաջին, իր անուշ ծայրով յերգում թիլադրում էր՝ Թե վժը թիլը վորին կցեն: Բանվորները խումբ-խումբ կրկնում էին նրա յերգը—

—Կարմիր թիլը կանաչին,

կարմիր թիլը կապույտին...

Կրկնում էին ու չը՛րվե... չը՛րվե՛լ շարժում դազգահներն ու նախդուն թիլերը շարում խալիչայի մեջ:

Ամեն կեսորին, նամադից հետո՝ գալիս էր արհեստանոցի

տեղը, լուռ ընդունում իր ստրուկներին խոնարհ բարենները՝ Նա խեթ հայացքով ղիլում էր իր մորուքը, ու գիշատիչ դեմքով դետում իր հերթական զոհին. վորին պիտի հայոցի է սպառնա, վորին ծեծել ու վռնդել՝ նրա տեղը մի ուրիշ, ավելի արժան բանվոր գնելու համար:

Նա ամեն ինչ գիտե, նույնիսկ ճանճերի շարժումը: Արհեստանոցի պահապան Ալին, վորին «անթի Ալի» էին կոչում, իր շիտչեով ամեն ինչ գիտում էր, լրտեսում, շատ անգամ նա ստիպված հնարում էր ու պատմում տիրոջը:

Հավատարիմ Ալին, տիլըր ու քաղցած՝ միայն տիրոջ անունով էր կշտնում. այդպես էր արեւելյան վաճառականի որենքը.— «պահապան շունը յերեք չպիտի կշտնա, վրը ծառայի անձնվեր» ու հավատարիմ:

* *

Վոսկրացավի բուն էր խոնավ արհեստանոցը: Հիվանդ էր Մանմեղը, հիվանդ էր սղան ու վողջ արհեստանոցը՝ Բայց քանի վոտքի վրա յեր, քանի յերեխային կարող էր շալակով գործի տանել, նա հիվանդութուն չէր անվանում այդ, այլ աղքատութուն: Բայց մի որ ճակատագիրը նրան հարվածեց ընդմիշտ ու անդարձ:

Մի առավոտ, յերբ նա՝ շալակած իր յերեխային, արհեստանոց էր գնում, սղան հանկարծ հառաչեց ու ասաց խորհրդավոր, մեծի ձայնով.

— Բաբա, յես քո զավակն եմ. դու ինձ սիրում ես, չե... Տմը ինձ, փորիք գերեզմանը, մեջը դիր... Մի տանիլ ինձ են խալիչայի արհեստանոցը...

Մանմեղի ծնկերը թուլացան. նա հանկարծ զգաց, վրը կյանքն իր միջից թափվում էր վողջ մի հաշիվ չունի ես չախարհում: Հետևյալ օրը նա մենակ գնաց գործի. յերեխան տրդեն կոնդացել էր է չէր կարողանում շարժել նույնիսկ ձեռները:

Յերգում էր, թիլադրում Մանմեղը, բայց ծանր դարդն իր սրտում, ցրված, մտադրադ, յերբեմն նույնիսկ մոռանում էր ու «կարմիր—կապույտ թիլերի» տեղ տխուր բայաթի յեր մբժուում: Աչքերն արդեն սկսել էին այրվել, պղտորվել. մի քանի անգամ՝ խալիչայի նկարը խառնել էր ու թիլերը ղիլթել:

Իսկ տերը ամեն ինչ գիտեր ու գիշատիչ բազեյի նման իր մաղձոտ աչքերով պատվում էր Մահմեդի շուրջը, մորուքը չփելով՝

Ու մի որ ել նա կատաղած, փոփրած հարձակվեց Մահմեդի վրա ու ձեծելով, թքելով դուրս շարտեց փողոց, լավ հիշելով իր վաշխառու հոր խրատը.

— «Մի մարդու վոր քամեցիր ու մեկեցիր խաղաղ, դուքս չպրտիր փողոց»:

* *

Ամեն առավոտ յերեք սովերներ, մահվան դատապարտվածներ զալկուելյամբ ծանր անցնում են փողոցով: Փոքրիկ աղջիկը շարսավի մնացորդներով ծածկված՝ առաջնորդում է կույր հորը դեպի ճակատ: Հոր շալակին իր կոնդ տղան է, իսկ ձեռքին իր տխուր սաղը: Բերում է դրանց փոքրիկ աղջիկը, հասցնում փողոցի մի անկյուն ու ամսթխածուխյամբ յետ փախչում շտապով:

Հայրը անքալով ու հառաչելով վայր եր դնում տղային, լալում էր իր վտխ սաղն ու սկսում յերգել իր մեծ դարդը, իր «խալիչան»... յերկար ու քարակ հյուսում էր, շարում իր յերգն ու սպասում անցորդներին վողորմություն:

Կարմիր թևը կանաչին,

Կարմիր թևը կապույտին,

Հէյ, խալիչա, խալիչա...

Ուրիշի վոտքերը փափկացրելը,

Յերեխիս վոտքերը տաքար,

Հէյ, խալիչա, խալիչա...

Ձայնը մղկատում է, այլովում, պատերը կոծում, բողբոլում, ու մնում անդարձան, վորպես ամեն ինչ արեւելյան են քաղաքում...

1924



Ճ/Պ

Ա Ր Ծ Ա Ք Ի Տ Ա Կ

Աժդահա, վիթխարի չայդ մարդն անշուշտ Իբանի կնո մեծ հերոսները ժառանգներից երբ Բարձրահասակ, լայնաթիկուն քր խոշոր, պատմական դեմքով, Թանձր խոհեմ մորուքի ու լիտառայ սև հոնքերի շրջանակի մեջէ կապտավուն աչքերում նախնական անկեղծ ու հավատ ներշնչող մի փայլ կար, և միտամանակ անվախ ու անչար հայացք,—մի մարտահրավեր կյանքի բոլոր արհաւիրքներին:

Սակայն դեմք ու զրահի տեղ նրա վրա կար մայն մի մեծ փալան:

Մշակ եր Հասանը, բեռնակիր մշակ, բայց ծանրությունները

հետ նա կարծես խաղ էր անում: Ապրանքները ծանր հակերն
ուսին՝ վաղուց էր, թաղում:

Բայց վճիռ չար աչքը նրան դիպավ, վճիռ սատանան նրա մեջ
մտավ ու ավերեց են սարձմարմինը:

Մի որ առավոտից յերեկո նա անընդատ ապրանք կրեց, լեց-
րեց յեղբորական մեծ պահեստն ու յերբ քրտնքի մեջ լողում էր,
մի քամի յեկավ, «սաթիջամ» բերավ նրա վրա ու անկողին ձգեց
մի ամբողջ ամիս:

Նրա միակ բժիշկը մայր բնությունն էր, վորն այրող տենդի
մեջ կյանքի թելն էր պահպանում:

Յերբ նա ուղբի յեկավ, առաջին ձայնը վոր լսեց, իր կնոջ հառա-
չանքն էր ու չորս յերեսաների ճիչը:

— Բարա, հաց...

Այդ ճիչը սուր ասեղներով ծակծկեց նրան, ու դեռ տակավին
չամոքված, նա վեր կացավ, մեջքին դրեց իր փախնը և որորվելով
դիմեց դեպի իր ծանոթ շուկան:

Այնքան թուլացել էր, վոր փախնն իսկ թվում էր նրան արձ-
ճից շինած: Տաքության ավերակները շրջում էին մարմնի մեջ, քա-
շում դեպի անկողին, շունչը ծանր էր, դուրսը պտտվում էր, կար-
ծես անդունդի վրա որորվելիս լինել:

Ահա կանգնել և Հասանը են մեծ խանութի առաջ, վորի հա-
մար քանի-քանի ծանր հակեր և տարել ու բերել, տեսնում է նո-
րից են քար-արձանի նման անշարժ նստած վաճառականին, վորը
դայլան է քաշում. ներս և մտնում, դուրսը թեքելով բարե և տա-
լիս, բայց վաճառականն իր դաժան, արհամարհող դեմքով չի ու-
ղում նկատել նրան:

Նորից բարեում և Հասանը նվազած ձայնով ու սպասում: Վա-
ճառականը բախկան ժամանակից հետո բարեհաճում և ու նրան
անում գործակառարին:

— Տարեք են արծաթ փողը անդլիական բանկը:

Հասանը խոնարհ ուղտի պես վրան և առնում արծաթե դրան-
ներով լի պարկերն ու առաջ շարժվում:

Վաճ նա շարժվում. ամեն քայլավորին աչքերին պեծեր են
փայլում, գողում է, կարծելով թե փայլ է ընկնում:

Իսկ հուլիսյան արեն այրում է, խաթում, և համառորեն հե-
տևում նրան, կարծես մտնում նրա մարմնի խորքերը:

Մի տեղ նա կանգ առավ. հենվեց քանդված պատին. ինչպես

Ս. վոր վայր չընկավ մի դերմարդկային ճիչ նրան ազատեց. ինչ
մեծ ցանկություն էր դալիս մեջը,— թափել անիծված արծաթե
փողերն ու փռվել գետնին, թեկուզ հավիտյան հանդիստ առնելու
ես չարքաջ կյանքից:

«Ե՛հ, թեկուզ մեռնես» — պիտի տեղ հասցնես... դամաթ և, դս-
մաթ... Այսպես չի՞ ասել խմաստուն Ֆիրդուսին:

«Մի որ մարդն և փախնի վրա, մյուս որը փախնը՝ մարդու
վրա»...

«Հալբաթ մի որ ել բաղալ Հասանին կժպտա...»

«Ասում են ծովի են կողմը մեղ նման չի, ենտեղ քյասիբեն-
րի իշխանութունն է... Հավատալու բանն է... Ուր և թե դան, աչ-
քերս ջուր կաթվեց»...

Նորից շարժվում և դանդաղ, յերեքուն: Ահա անդլիական բան-
կը, բայց վճիռն են ուր և թվում:

Ո՛ր, յերեք իր կյանքում նա այսպիսի սոսկալի ճիչ չի արել...

Աչքերը մթնում են. նա չգիտե, յերազմն են, թե՞ արթնում.
շարժվում է, բայց թվում է, թե ինքը չի այդ անում, այլ մի ուրիշ
մղում է իրեն:

Մոտենում և բանկին: Ես սանդուխդներն ինչպե՞ս յայսքան
բարձր են տանիքի վրա ու մեծ յերեսաներն են ճշում, աղերսում:
— Բարա հաց:

Հասանը մի վերջին ճիչ է անում, մոտենում և բանկի սան-
դուխդներին, բայց առաջին աստիճանի վրա վոտքը դնելուն պես
վայր և ընկնում:

Արծաթը դնում և ու լուռ. մի խոր հառաչ է յերեքում Հասա-
նի կրծքից, վերջին հառաչը... Արյուն և հոտում նրա բերանից ու
ներկում սանդուխդի շիկացած աստիճանները:

Լուռ ու անտարբեր նայում և բանկը. լուռ ու արհամարհող
հայացքով անցնում և հաճախորդ վաճառականն իր քարացած դեմ-
քով չի շտապում նույնիսկ բանկի պահապանը:

Ընկած էր Հասանը, վորպես մի դո՛հ մեհյանի առաջ: Նրա ջը-
թունքների վրա դայրույթի անեծքն է դրոշմվել՝ իր միակ ժառան-
գութունը, վոր նա թողնում էր քաղցած յերեսաներին:

Իսկ են բարձր մինարեյից կրոնավորն իր զիլ ձայնով կեռո-
ր վա աղանն էր կանչում, կարծես առում էր ընկած Հասանին:

— «Այսպե՛ս է... այսպե՛ս է... որենքը յերկնքի և յերկրի»...

ԴՈՒՇՄԱՆԻ ՅԵՐԳԸ

Քաղաքում լուր եր տարածվել, թե բուլճերիկները սահմանի մոտ թնդանոթներ են արձակել և աղա շարժվել՝ դալիս հնա Ո՞վ եր տեսել և ոտուգել, վոչ վոր չի հարցնում. ամենքն իրարից լսում են ու իրար սարսափահար անում:

Շուկայում մի հարահրոց և, մի իրարանցում, ասես աշխարհի վերջն և յիկել. սարսափից գլուխները կորցրած վաճառականները վազում էյին գետու գետն՝ թաղարդն ընկած մկների նման:

Հանկարծ բաղարի կենտրոնից հարա յեն տալիս.

— Հէյ, ուղղահավատներ, դեպի մեծ մեչիդը...

Մի ակնթարթում, չը՛բխկ... թը՛բխկ, փախում են խանութ—

ներն ու շտապում դեպի նվիրական մեչիդը: Այնտեղ մուշտկիդը պիտի աղոթի, հսկում կատարի, վոր ալլահը պաշտպան կանգնի իր հավատացյալներին, փարատի նրանց այս նոր, շտեմնված պատուհասից:

Մեչիդի փողոցում դռնոց և ընկել անցնողներին. վաճառական, դառաֆ ու խան—ահը սրտներին շտապում էյին աղոթելու: Բայց այդ ժխորի մեջ ամենից բարձր հնչում եր մուրացիկի ձայնը: Նա իր սովորական տեղն եր, փողոցի անկյունում, Ադամա հադուստով, միայն մի փոքր տեղ ամոթը ծածկած, մաշված, կերված դեմքով ու կիսակույր աչքերով: Մերկ մարմնը դալարվում եր կիսաթեք, ձեռքերը կարկառում էյին, ու զի, աղետալից ձայնով նա կանչում եր, ճշում, վորպես դիվահար.

— Հէյ, ալլահը բուլճերիկներին տու՛նն ավերի, նրանց հիդն ու թողը կորցնի... Հէյ, Ալլահը նրանց ճամբեն կրակի, աշխարհիս բոլոր ցավերը նրանց գլխին թափի... Հէյ, ալլահը...

Կանչում և մուրացիկը, նորանոր անեծքներ շարում բուլճերիկների գլխին ու ջղաձիգ մեկնում ձեռները՝ սպասելով փողորմուծյան:

Անցորդները սրտաճաք մոտենում էյին, կարծելով թե նա մի նոր աղետ և հաղորդում, ու տեսնելով, վոր նա իրանց սրտին և խոսում, մի չնչին, պղնձե զրամ էյին գցում նրա առաջ:

Յերբ մեչիդը լցվեց հավատացյալներով ու փողոցը հանդարտվեց, մուրացիկին մոտեցավ մի յերթարսարդ, կասկածոտ, խորը աչքերով յետ ու առաջ դիտեց ու ասաց.

— Ալի, ինչ ես եղպես կոկորդդ պատում, ինչ ես վախում բուլճերիկներին. յես ոտաբռնությունից եմ դալիս և դիտեմ, վոր նրանք քյասիբներին են քոմադ անում, իսկ են մեծերին թշնամի յեն... Ե՛հ, թող վախենան վաճառական, դառաֆ ու խան. դու ինչ ունես վախենալու. ինչե՛ր յես ուրիշներին տեղ անեծքներ թափում...

— Ադա, յես վողորմությամբ եմ աղբում, թե վոր դան բուլճերիկներն ու թալանեն հարուստներին, ել ձվ կտա ինձ վողորմություն...

— Յես աղա չեմ, յուղաշ ասա... Չիմացմը Ալի, ինչ ասի... խեղճին, աղբատին են քոմադ... Թե հասկանաս, Ալի, եղ բաները քո աղբուն ծծողներին սիրտը չես յեղի...

— Կարդաշ, ինչ խեղճ և ֆիացել վրաս, վոր ինչ հասկանամ. ծնված

որից որ չեմ տեսել, իսկ յերբ բաղդն ինձ վերջին անգամ խփեց, ել յես վոչինչ չեմ հասկանում... յես մենակ յերկու ձեռք եմ առնում ես աշխարհում, մեկը՝ վոր վողորմություն ե տալիս, մյուսը՝ ես իմ չոր ձեռքը, վոր վերցնում ե... Ե՛հ, մի ժամանակ, գյուղումն եյի ողլուշաղովս, ճորտն եյի ես կատաղած խանի... Կիսաքաղցած, քաշ եյի տալիս իմ կյանքը, բայց դե ելի կողքին խոտող, դարձս լսող կին, յերեւա կար... Հիմի վոչվոր չկա իմ շուրջը... ես իմ չոր գլուխն ե մնացել...

Արցունքներն սկսեցին հորդառառ թափվել Ալիի այրված աչքերից։

— Յերբ վոր սովը շատ դռեց՝ ասի խանից մի նոր հող վերցնեմ, կարելի յի բանս աջողի։ Գնացի մոտը, մի քարքարոտ, անպետք հող խնդրեցի ու վերկալա իջարով։ Ամադ արի, արյուն—քրտինք թափեցի, ձեռքերիս դուռով արտ շինեցի ու ցանեցի մեծ հույսերով։

Բայց արծիվը յերբ ե թողնում հանգիստ փոքրիկ, անգոր դուշերին...

Մի որ խանը սեյր եր անում. յեկավ ձևով, արտիս աչք ածեց, մեծ բեկորը շտկելով, ու նախանձ խոքը գցեց։—

— Լավ ձեռք ունես, Ալի,—ասաց,—բայց ես տեղն ինձ հարկավոր ե...

— Ա՛ղա, ասի, լավ ե եստեղ ինձ սպանես, քանց ես արտը ձեռքիցս լալես, ողլուշաղիս ոռոգղը կտրես... ամադ ունեմ, քրտինք ունեմ թափած ամեն մի թիղ հողի վրա...

Ասի թե չե, խանը յեփ յեկավ ու փրփրեց։

— Քահնի գլուխ ե քո գլուխը, եյ, հեյվան,—ասաց,—ի՛նչ, խանին մոռացել ես... յես քեզ ենպես հիշել կտամ, վոր հավիտյան չմոռանամ...

Ու դամշովը մին,—յերկու յերեսովս յեկավ, արյունլիվա արավ ինձ

— Ես քեզ,—ասաց,—բեհ եմ տալիս, մնացածը ժամանակին կստանամ...

Անցավ որը, դիշերն եկավ. մի բայդուշ մութ գիշերու Յեկան խանի ֆարբաշները, վոնց հարածի՝ մոնչալով հայհոյելով ինձ քարշ տվին, կապոտեցին, ողլուշաղիս լաց ու կոծը վեր արին։

Եհ, ինչ ասեմ, ինչ յերկարեմ... Թակեցին, ենքան, գերեզմանի դուռը տարան... ու ես որվանից, կարդաղ, լմով իմացիք, մեջքս կոտ-

րած, կոնդ եմ յես։ Մի շաբաթից հետո՝ կնիկս սրտաճաք յեղավ, մեռավ, ինձ ել վոնց մի կենդանու լեշ դուրս գցեցին մեր դուռը... Երեխեքս ել... եհ, ինչ ասեմ, սոված-ծարավ մնացին խալիփ դռներին, հիվանդացան ու քոչեցին ես աշխարհից... ոջախիս ծուխը կտրվեց...

Մնացի եսպես, չոր գլխովս, կոնդ ու անտեր, դարգերի տակ ձևված, դադարկուն ու քաղցած Հիմի, կարդաղ, տեսնում ես իմ որը. քաղաքի կեղտ ու ցեխում ձեռք եմ մեկնում ամենքին։ Յես ել վոչինչ չեմ հասկանում, մահ եմ կանչում, վոր չտեսնեմ ես անլրավ աշխարհը։

— Ալի, շատ տխուր ե քո պատմությունը, բայց հաղար ավելի ես ե տխուր, վոր քեզ սպանողի անեծքն ես կրկնում, քո դուշմանի յերդն ես յերգում։ Թե ես բաները հասկանաս, Ալի, քո ձեռնից քաղաքի պարիսպները կչարժվեն...

Մեչիդից հատ ու կնիդ մարդիկ դուրս յեկան Յերիտասարդը նորից թաղնվեց կողքի նեղ փողոցում, իսկ աղեխարշ Ալին մնաց յր տեղը դնողալիս։

— Ալլահ, Ալլահ,—կանչում եր նա մեքենաբար ու մոռացել եր, հըր ե ինքը, ինչ ե անում, ապրում ե դեռ, թե պտտվում ե ջհան-նամի խորշերում։

Ու յերբ նորից փողոցը լցվեց դռբոցով, վերադարձող վաճառական, դառաֆ ու խան դարմանքով եյին անցնում մուրացիկի մոտով։ Ալին, Ալին, հըր գնաց նրա ձայնը, վոր հնչում եր այնպես ղլի, վոր հյուսթալի նգովը ու անեծք եր թափում բուլբուլներին գլխին։

— Ալլահ... ալլահ... մրմնջում եր Ալին ու ստեպ-ստեպ մոռաց-վում, ինքն իրան փափսում։ Ողլուշաղս... արյուն — արտ... յես վոչինչ չեմ հասկանում. ես ինչ խաբար, ինչ հրաշք եր տալիս մում ոտարականը։ Ա՛խ, յես վոչինչ չեմ հասկանում... յես չգիտեցի, վոր դուշմանիս յերդն եմ յերգում...

1925





ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌԱՎՈՏԸ

Կարմիր զօրքերը մոտենում էյին, դբավելով կայարան առ կայարան, ու քանի մոտենում էյին, այնքան ավելի յեր ճեղքվում քաղաքի տրամադրությունը: Կյանքը բեվեովել եր յերկու ծայրերում. մի տեղ՝ քաղքենիներէ շրջանում, կարմիրներէ ամեն մի նվաճումը բերում եր իր հետ մղձավանջ, սկզկեր, իսկ մյուս ծայրում՝ բանաւում այդ լուրերն ընդունվում էյին ցնծադին խանդավառությամբ. այստեղ դալիք աղատությունը շաղկապվում եր վարդադույն արշալույսի հետ...

...Գիշեր եր, ցուրտ ու խավար: Բանտի կծու հոտերով լցված մթնոլորտի մեջ՝ սառը դեմանի վրա պառկած էին բանտաբլկալները: Աղոտ ու սղոտոր լույսի տակ լերեում էին ցրտից կծկված մարմինների շարքերը:

Որվա լուրերը հուզիչ էին. կարմիրներն արդեն մոտեցել էին նախալերջին կայարանին: Վաղ առավոտից, բանտը մեղվանոցի նման բզզում էր, արձագանքելով դրսից յեկող տեղեկություններին: Այժմ էլ՝ ուշ գիշերին՝ բանտաբլկալները քնած յերազում էին այդ ցնցող ուրախության թևերի տակ: Միայն անկյունում մի խումբ մարդիկ դեռ արթուն քչիչում էին, քնում մոտալուռ ինքնաշուկայան հեղվով կազմը, ընտրում թեկնածուներ:

Կես գիշերը վաղուց եր անցել, յերը հանկաքձ զընդալին բուցվեց բանտի դուռը և մի դաժան, թավ ձայն դոչեց ձգելով.

Վըստամ... (կանգնել):

Բոլորը վոռել յին կանգնում ցնցված, ու բոլորի մեջ խայթող ցրտի սառսուռն հետ ներս և սպրբում մի մոռյո միտք.— բոլոր մտածում են՝ էլեկել են զնդակահարելու...:

Կանգնում են յերկու շարքով, ու սպասում. բոլորները դիտմամբ ձգում են անարեկելու համար: Թավ ձայնը իր յերկու պահապանների հետ նայում են, շանթում բանտաբլկալներին մոլեգին աչքերով:

Ապա սկսում են կտրվալ ազգանունները ձայնի կոշտ, հրամայական շեշտով, ու տեղ-տեղ կանգ առնելով, նշաններ դնում ցուցակի մեջ:

Թավ ձայնը դուրս և կանչում իրեն ընտրած յերկու բանտաբլկալներին, ապա ձեռքով նշան և անում, վորպեսզի մնացածները ցրվեն իրենց տեղերը:

Յերկու զոհերը շտապով հավաքում են իրերը, ու արագ շուկով խոսում ջրջապատող ընկերների հետ. «տանում են զնդակահարելու».— անցնում և շուկը մեկից մյուսին ու իր մահվան լըջությամբ կասեցնում խոսքերը... Սեղմում են ձեռքերը, համբուրվում խորը հրաժեշտով:

— Մնա՛ք բարով ընկերներ, մենք էլ չենք դառնալու,— ասում են նրանք ու բաժանվում:

Հանկարծ Վաղդյան, վորն ամենափոքրն էր ընկերների մեջ, ծղրտում և հիստերիկ ձայնով.

— Դահիճներ...

Թավ ձայնը հետ և դառնում, կանգնում խմբված բանտաբլկալների զիմաց ու մոնչում, արյունոտ աչքերը չռելով:

— Ո՞վ ասաց:

Բոլորը լռում են:

Վաղդյան ուղում և դուրս ընկնել, ասելով.— Եյես եմ, բայց հետեից կանգնած ընկերները քաշում են փեշից, հասկացնելով, վոր լռի: Բոպեաչակի թավ ձայնն ու բանտաբլկալներն աչքերը հառած նայում են իրար, կարծես չափելով իրար ուժերը: Թավ ձայնը ձեռքը դնում և տորճանակի պատյանի վրա, ձեացնելով թե ուղում և հանել Կատաղի վրեժը բռնկում և բանտաբլկալներին. թվում է, թե մի փոքր ցնցում ևս՝ անա բոլորը կհարձակվեն ու կխեղդեն նրան:

Ու կարծես զգալով այդ ահավոր բռնկումը, թավ ձայնը օթափվում և ու բավականանում է միայն պոռալով.

Մալչամ... (լռել):

Ապա մի քանի վարկյան էլ կանգ և առնում, և դուրս գնում զինվորական քայլերով: Բոլորը զգում են, վոր «թավ ձայնը» ահից ոտիպված նահանջի դիմեց, ու հուզված ջրջապատում են Վաղդյանին:

— Վաղդյա, — դիմում և ընկերներից մեկը, — մի՛թե չես հասկանում վոր սրանք մի պատճառ են փնտռում, վորպեսզի բոլորես զնդակահարեն: Մենք չպետք և դուր տեղը նոր նշոհեր տանք. չե՞ վոր մեր ընկերները շուտով կմտնեն քաղաք...

— Չեմ կարող համբերել, հասկանում եմ, չեմ կարող, ասում և Վաղդյան, բռնեցքները ցնցելով, ապա հանվելով պատին, յերկու ձեռքով սեղմում և դուլխո:

Բուռն փախչում և բոլորից հուզված ջղերը յերկար ժամանակ չեն հանգստանում: Բայց, դալիս և պահապանն ու պահանջում, վոր դնան իրենց տեղերը:

Նորից պառկում են, ու ցած ձայնով խոսում, ծխելով հասարակ կոշտ թուխներ: Պոռում են իրենց յերկու ընկերների մասին... Նրանց սրտերում հնչում և վերջին հրաժեշտի ձայնը.

— Մնա՛ք բարով ընկերներ, մենք էլ չենք դառնալու...

Գիշերն անցնում է անհանգիստ. կայարանի կողմից լավում են շողեկառների խուճապային սուլոցներ. ապա տիրում է խորհրդավոր լուսեթյուն...

Արշալույսը վողջունում է բանտի պատուհաններից, ասես ժպտում է հազարավոր դեմքերով...

Վաղ առավոտից բանտի դուռը բացվում է ու ել չի կողպվում: Պահապանը ներս է մտնում ու բարեում քծնելով. նրա դաժան գորշ դեմքին այնքան է սազում ժպիտը, վորքան աղատությունը՝ բանտին:

—Յեթե ուզում եք կարող եք դուրս գնալ,—տառջարկում է նա: Բայց վոչ վոք չի դուրս գնում, չհավատալով թշնամու առաջարկին, չէ՛ վոր կարող են փախչողների տեղ գնել ու պնդակահարել...

Սկսվում են այն սպասողական, միջանկյալ մոմենտները, յերբ հին ռեժիմը չքանում է, բայց նորը դեռ չկա. յերբ քաղաքը կարծես զրկվում է իր իշխանությունից, իր դեմքից...

* *

Չանցած մի քառորդ ժամ, հանկարծ փողոցով ծիծեռնակի թևով թռչում է մի ձիավոր կարմիր բանակային ու կտրուկ կանգ առնելով բանտի առաջ՝ ներս է ընկնում գավիթը՝ Նրա նկատում են բանտի պատուհաններից ու դուրս թափվում: Բարձրանում է մի ցնծադին աղմուկ, մի աննկարագրելի ճիչ, վորը դուրս է քարշում բանտից բոլորին, բոլորին...

Դուրս են թափվում հեղեղի նման, շրջապատում կարմիր բանակայինին, սեղմում են ձեռքը, համբուրում են ձիուն...

Կարմիր բանակայինը՝ շմած այս անսպասելի պաշարումից: ամոթխած կարմրում է, ժպտում, կարծես զարմանում, թե մի՞թե ինքը կարող էր այդքան ուրախություն պատճառել...

Մի քանի րոպեից հետո նա հազիվ է կարողանում ազատվել ու շարժվում է դեպի դուրս՝ իր հետ շարժելով բանտի ամբողջ բանակը: Փողոցում բոլորը կանոնավոր շարվում են ձիավորի յետևից:

Դեմքերը պայծառվում են մի ներքին լույսով: մի րոպեյում մոռացվում են ամիսները տանջանքն ու զրկանքը, յերեկվա որը թվում է վաղմեց անցած մի անախորժ յերազ...

Մինչ ընկերները շարվում են յերթի, քաղաքից դալիս է Վա-

լողիլայի քույրը, վաթաթվում է յեղբորն ու համբուրում ուրախության աքցանքներով...

—Ընկերները գնդակահարված են... հայտնում է նա տխուր ձայնով: Դուքը տարածվում է շարքերում ու վառում ցատումով:

—Սքիկաներ... դահիճներ... դռնում են չորս կողմից:

Վալողիլան դարձնում է յերեսը դեպի բանտն ու յերկար ձեռքերը շարժելով, ասում է արտասովառոն ձայնով:

—Մամք բարով, ընկերներ, մենք ձեզ չենք մոռանալ, մենք ձիվոխարինենք ձեզ...

Իսկ բանտի շինքն այժմ կանգնած էր վորպես մի շատ հին, բորբոսնած անցյալ...

Փողոցը լցվում է մարդկանցով. շարքերի ծայրը կորչում է հեռվում: Հնչում է Ինտերնացիոնալը ու հետզհետե ծավալվում հարյուրավոր ձայներով:

Յեքթր շարժվում է...

Սկսվում է խորհրդային առաջին սրբ...

1932



ԿԱՍՈՒՐՋԸ

Ամեն առավոտ, յերբ մենք հալածվում էինք յերկաթուղու պահակատան սենյակում՝ թեյի շուրջը, անխուսափելի վեճ էր բռնկվում, վորը համարյա միշտ սկսվում էր կամուրջից։ Բայց պատահանից յերևում էր կամուրջը՝ պայթումից բացված իր յերակով, վորը տառնալու էր ներշնչում մեզ, կարծես մի վերք լինեք հսկա յերակի վրա։ Մպիտակ գործերի ժառանգությունն էր այդ։ Նրանք պայթեցրել էին կամուրջը, ու այժմ նահանջում էին, հետզհետե հալվելով կարմիր բանակայինների հետադուրսումից։ Մեր վաշտը մնացել էր գետափին՝ կամուրջը պաշտպանելու համար։

Քաղաքից այսօր փոքր ինչ մնալ էր. նա ինչ վոր տեղիկում էր ստացել

— Այս գրությունն այլևս չի կարելի հանդուրժել,—ասաց նա, թողնելով թեյն ու քաղցրով սենյակում.—պետք է անհապաղ վերականգնել կամուրջը...

— Վերականգնել, այն էլ անհապաղ.—ախոցն ուղղելով ասաց հին ինժեները, վորին ուղարկել էին կամուրջը հետադուրսելու. նա ձեռքին բռնած լրագրի յետևից աչքերը սևեռեց քաղաքի վրա.—կատակ էք անում... այս կամուրջը փոքր ինչ կարգի բերելու համար մի տարի յն հարկավոր։

— Ե՛հ, դուք, մասնագետներդ միշտ սիրում եք գործը դժվարացնել...

— Համեցեք, ինքներդ հետադուրսեք. բայց դրա համար անհրաժեշտ ե, ծանոթ լինել տեխնիկային...

Քաղաքից, կարծես չլսելով ինժեների ասածը, մի յերկու անգամ մտացիլ անցավ սենյակով ու նորից տեղը նստելով, նայեց վաշտապետի դեմքին։

Ի՞նչ կասես, Սիմյոն...

Վաշտապետը, դադարելով փռալեն թեյ խմելուց, հանդիսապատասխանեց.

— Գլխավորը հրամանն է. յեթե հրաման դա, իսկույն կվերականգնենք կամուրջը։

— Լսում եք, ի՞նչ ե ասում.—դիմեց քաղաքի ինժեներին։

— Լսում եմ,—ասաց ինժեները.—բայց ինչ ե հետևում դրանից—յերկու անգամ յերկուսն տասնչորս չի կարող դառնալ...

Ու սե հացի կտորը բռնած, ձեռքը շարժելով, նա սկսեց բացատրել, թե ի՞նչ տեխնիկական դժվարություններ կան գործի մեջ։ Բայց նրա խոսքի ամենատաք մոմենտին, ներս մտավ մեր ագիտպրոպը.—պրոլետարական բանաստեղծը, մի խոշոր թաս ձեռքի Ե՛հ, ճշտակի նայելով ինժեների դեմքին, նա բարձր ձայնով արտասանեց իր նոր գրած «Կամուրջ» պոեմից.

Մե՛նք կկապենք կամուրջը,

Կամուրջը՝ ասպագայի հետ...

— Ե՛հ, ձեզ ի՞նչ կա,—ասաց ինժեները քմիծաղով.—դուք՝ պոետներդ կարող եք կամուրջ ձգել յեղ ամպերի վրա։

Պոետը վերից վար շուր նայեց ինժեներին.

— Թույլ տվեք ասել, վոր դուք դեռ չեք վաճառվել գետի ձախափի հողաբանությամբ. ձեզ հարկավոր ե փոքր ինչ յերևուստադանալ, բոլորեկանալ...

— Գուցե և պոետանա՞լ—այն ժամանակ իհն՛րկի, անկարելիին մարելի կդառնա...

Քաղցիկը, կարծես սպասելով իր հերթին, միջամտեց.

— Հեղափոխութեան ժամանակ անկարելի բան չկա. յիս ձեզ մէջիջնեմ մի դեպք ֆրանսական հեղափոխութեանից—մի անգամ պորբերի հրամանատարը առաջապահ ջոկատի հետ շտապում և դեպի մեծ գետի ափը, վորը վրայով պիտի անցնէր դորբը:

— Չափե՞ր գետի լայնութեանը—դիմում և նա ինժեներին.

— Չեմ կարող.—պատասխանում և նա.—գործիւնները հետեւն են մնացել:

— Պետք և չափել անմիջապէս.—ասում և հրամանատարը, ձին բռնելով գետն ի վրէ:

Ինժեները տարակուսում է, ուսերը շարժում, բայց... չանցած մի քանի րոպե՛ կատարում և հրամանը...

— Ի՞նչպէս—հարցրեց պոետը, հետաքրքրութեամբ բռնկված:

— Նա ինքն և դառնում դործիք՝ դառնում և կարկին. նրա մի պոետ իր մարմինն էր, իսկ մյուսն՝ իր աչքերը... Նա կանգնում է, գլուխը սյունի պէս, ճակատին և քաշում գլխարկն ու նրա յիշողութեւնը հալածում ափին: Հետո նույն գլխով պտտվում և ուսերեսը դարձնում իր կողմի ափին՝ նշելով այն կետը, վորտեղ ընկնում էր իր հայացքը. ապա քայլելով չափում և մինչև նշած տեղը, — և դորժը պատրաստ էր... Յերբ հրամանատարը վերադառնում է, ասում է ծիծաղելով:

— Դուք ավելի արտա չափեցիք, քան թե յիս սպասում էի...

— Ա՛յ հասկանում եմ—ասաց պոետը վողկվորված, այդ դեպքի մէջ թռիչք կա, բանաստեղծութեան կա...

Ինժեները փոքր ինչ նեղացած վեր կացավ տեղից.

— Չե՞ր կարծիքով ամեն ինչ զինվորական հրամանով և կատարվում՝ մեկ-յերկու, պրծնալ... Վորտեղ կամուրջի վերանորոգելը և վորտեղ գետի լայնութեանը չափելը...

— Ամեն մեկն իր կարգով—ասաց քաղցիկը.— կրկնում եմ, հեղափոխութեան ժամանակ, անկարելի բան չկա...

Ինժեներն ուղում էր դուրս գնալ, բայց պոետը նրա առաջը ձգեց, արտասանելով.

Անկարելի կարելի՛ յի, կարելի՛

Յեք բարեք բոցավառ

Քայլում եմ հաղորեմ...

Ինժեները ձեռքով շարժեց ու դուրս գնաց ասելով.

— Ի՞նչ խոսեմ ձեզ հետ, այսօր բոլոր պոետ եք դարձել...

Բայց մի առավոտ խոսակցութեան ընդհատվեց անակնկալ կերպով. պոետը ներս մտալ՝ ձեռքին բռնած հեռագիրն ու հանդիսավոր ձևով մատուցեց ինժեներին:

— Սա ինչ յերեխայութեան է—բացականչեց ինժեները, դեմքը խոփոկելով.— ինչպէս թե—«առնալով վերականգնել կամուրջը... վերականգնել յերկարադային հաղորդակցութեանը... վազոն-արես-սանցները կամուսնեմ վաղը ժամի 7-ին»: Սա ինչ բան է,—ասում էր նա, նայելով բոլորի դեմքերին...

— Ուղղակի վոչինչ չեմ հասկանում,—ասաց նա հուզված ու շտապ քայլերով դուրս գնաց, թողնելով սեղանի վրա թիկն կիսատ բաժակը:

— Իսկ յիս հասկանում եմ—ասաց պոետը նրա յետեւից —սա ձեր հորեկանն է. ձեր յերիտասարդութեանը...

... Անցավ մի քանի օր: Ինժեները դարձել էր լուսկաց մտացիւր, ու կարծես շարունակ ինչ վոր փնտռում էր: Մենք հազվադեպ ելինք լինում նրա հետ, նա մեծ մասն անց էր կացնում գետի մյուս ափին: Տեսնում էինք, թե ինչպէս նա շարունակ կամուրջի վրա կարդադրութեաններ է անում, հաճախ իջնում ներքե՛ւ բանվորների մօտ Գետի մյուս ափին կանգնած էր մի գնացք, վորում բոլորը ինչ վերածված էր արհեստանոցի:

Մենք անհամբեր սպասում էինք կամուրջի ավարտելուն, բայց յերբ հանդիպելիս հարցնում էինք ինժեներին, նա վոչինչ չէր ասում:

Վերջապէս մի ամսից հետո, առավոտը նա ներս մտավ ու գլխարկը վերցնելով, ասաց ուրախ ձայնով.

— Սիրելի ընկերներ, կարող եք ինձ ճորհավորել. կամուրջն արդէն պատրաստ է... վաղը ձեզ ամբողջ կազմով հրավիրում եմ իմ հորեկանին... այժմ յիս կարծես քսան տարեկան յերիտասարդ եմ...

Մենք ցնծաղին բացականչելով վողջունեցինք նրան՝ ձեռքը թոթվելով, իսկ պոետը մոտեցավ ու համբուրեց ինժեներին հետ:

Յերբ մյուս առավոտ մենք մեծ խմբով նստեցինք վագոնի ինժեները ուրախութեանից կարծես վոչինչ չէր խուս:

Գնացքը սուշեց ու շարժեց հանդիսավոր, դանդաղ ընթացքով
«Ինտերնացիոնալի» նվագով:

Յերբ հասանք կամուրջի նորոգված տեղին, ու ներքևից, խա-
չածե ամրացրած շղաների վրայից, բանվորները վողջունեցին ու-
ռաներով, դրոշակները ծածանելով, ինժեներն ել չհաժարեց:

— Սա ուղղակի հերոսություն էր, — ասաց Բնա, Վերնամոռա-
յության մեջ ու գլխարկը ձգեց դետի մեջ:

Նորից ներքևից Թնդացին ուռաները:

Իսկ պոետը բամբ ձայնով արտասանում էր իր պոեմից.

Մենք կկապենք, կկապենք կամուրջը,

կամուրջը՝ ապագայի հետ...

1933



ԿՈՍՅԵՐԻՏՈՒՇԷՆ

Սի փոքրիկ աղջիկ էր տարիներ առաջ, ցնցոտիները հագին,
վոտարոբիկ, անցնում էր մոր հետ յերկար փողոցով, կապտած
մատներին շնչում, ու աղերսում հուսակտուր. իսկ հիմա տեսնես
— ինչ հարվածային ընկեր է դարձել, ինչպես է քայլում հազի-
կան յերթով...

Հագել է ղինվորական խակին, մարմինը կոկիկ մեջն առել, ու
գլխին ծուռ զրեկ կեպին, հարածճի գանգուրները դուրս թողել:
Այտերը Թուխ ու կարմիր — աշխույժ խաղում են ժպտով, ու աչ-
քերը վառվառն՝ անվախ նայում աշխարհին:

Վերջին կոկեկտիվ հոգսեր կան թագնված իր լայն ճակատին,

քանի կոխող, դործարան ու ժողով պիտի գնա հարվածային այս
որերին: Բայց նրա դեմքին ամպ չի նստում—միշտ զվարթ է ու կա-
յուն—հարվածային այս որերին:

Քայլում է բանակայինի քայլով. մոմուտ յերգը խրոխտ-
շտապում է կենտրոն, Հոգեփոխում... Դեռ նոր է դարձել մեծ աը-
հավից, պատրաստվում է մի ուրիշ՝ դեպի կոխողը «Ժողաջան», դե-
պի արտերը բամբակի:

Այսոր դեկուցում ունի, թվեր և վերցնում կենտրոնից, հետո
դնում ԼԿՅՆՄ, Քաղկում, կալում քարտուղարի հետ, թե ինչու յե-
նա ձգձգում, մոտը պահում ծրագրերը:

Քայլում է, շտապում դեպի Քաղկուսվար, Լուսժողովում խմբա-
դրատուն, ու ել չեմ ասում—քանի ուրիշ տեղ. անցնում է դործից
դործ, ու յերեկոյան ուշ պահին,—վաղված այտերով դուրս է գալիս
բուռն ժողովից, ու հարժվում դեպի հանգիստը, դեպի մայրիկը
կարոտ...

—Ախի, չափ ընկած ձի յես, քեզ դադար չկա:

—Մայրիկ, ուշացել եմ, հա... ճատ դործ ունեյի... ան, մոռա-
ցա սապին հերթ կանգնեմ... Լավ, վոչինչ, վաղը կհիշեմ...

Պառկում է, ձգվում անկողնում, ու հոգնած մաքրով կրկնում
իր ճառը վերջին: Ապա քնում է խորը քնով, ու տեսնում յերազում
ընդարձակ մի դաշտ, հորիզոնը—վառ արշալույս, ու չորս գլին սփռը
ված սպիտակ աչքերը բամբակի Արտերը լիքն են աշխույժ խմ-
բերով... Թարմ ձայներն համերգ է լսվում... Կողքին Սուրենն է
ժպտում հեղնորեն, սոցմրցման բռնվում իր հետ... Ու այնպես
լավ է, այնպես լիքն է սիրտը նոր կյանքով...

...Մի փոքրիկ աղջիկ էր տարիներ առաջ, ցնցոտիները հապին
անցնում էր մոր հետ, կապտած մատներին ջնչում ու աղբթում
հուսակոտոր, իսկ հիմա տեսնես—ինչ հարվածային ընկեր է դար-
ձել, ինչպես է քայլում հաղթական թափով...

1931

*

8 u 4

Արյունոտ ծաղիկներ

1. Արևը	7
2. Վերափոր թռչունը	10
3. Կրասա տունը	12
4. Արյունոտ ծաղիկներ	15
5. Կարմիր համբույրը	18
6. Հեքյաթը	22
7. Վերջին տերևը	26

Անցվորներ

8. Անցյալի ներհը	33
9. Անցվորը	36
10. Հին ժամացույցը	38

Կամուսներ

11. Ուղարկում եմ ձեզ այս գրութը	43
12. Վերջին բարբրիկաղը	45
13. Անմահը	47
14. Կարմիր հերոսուհին	49
15. Կարապի յերգը	52

Արեւիկյան մոտիվներ

16. Խալիչայի յերգը	57
17. Արծաթի տակ	61
18. Դուռմանի յերգը	64

Խորհրդային առավոտ

19. Խորհրդային առավոտը	71
20. Կամուրջը	76
21. Կոմյերխուհին	81



ՀՀ Ազգային գրադարան



NL0325957

21292

7012 1 4. 25 7.
HLS 10 10